

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ ՀՄԱՅՆՎԻ**

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ Ու ՊՐԱԿՏԻԿԱՆ**

**ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների դոկտորի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2011**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանում

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ**

մանկավարժական գիտությունների  
դոկտոր՝ Ա. Վ. Աբրահամյան

մանկավարժական գիտությունների  
դոկտոր՝ Ա. Օ. Թովուզյան

մանկավարժական գիտությունների  
դոկտոր՝ Ս. Ս. Սողոյան

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2011թ. դեկտեմբերի 20-ին ժամը  
14<sup>00</sup> ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՅ-ի 020  
մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ. նոյեմբերի 19-ին:

020 Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար  
հոգեբանական գիտությունների թեկնածու

**Կ.Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Արմատական փոփոխությունները, հասարակության մեջ իրականացվող քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման ուղույն ճանապարհի հարթման հետ կապված մասնագետների պատրաստման ազգային մոդելի ու ծրագրերի իրականացման ուղղությամբ ծավալված աշխատանքները համրապետությունում ստեղծել են Հայաստանի պատմության մեջ աննախադեպ յուրահատուկ իրավիճակ: Մեր համրապետությունում կրթության բնագավառում պետական նպատակաուղղված քաղաքականությունը դարձել է սոցիալ-քաղաքական և տնտեսական բարեփոխումների առանցք:

Հասարակության ժողովրդավարացման և քաղաքական, սոցիալ-տնտեսական կերպափոխման, միջազգային կապերի ընդլայնման ու նոր որակական հարաբերությունների, աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող որակական պահանջների, կրթական քաղաքականության փոփոխության, միջազգային կրթական համակարգին ինտեգրման նպատակով մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների, գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման հետ կապված ոլորտում առաջացնում է մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) գործընթացի արդյունավետ կառավարման մանկավարժական տեխնոլոգիաների մշակման և ներդրման լուրջ անհրաժեշտություն:

Մասնագիտական կրթության նոր որակական աստիճանի անցման ժամանակ մասնագետների որոշակի բնագավառի մասնագիտական գործունեությանը ներկայացվող պահանջների միասնականացման նպատակով, մեծանում է պետական և հասարակական շահագրգռվածությունը ՄԿՈԱ գործընթացի կառավարման մեխանիզմների, մանկավարժական տեխնոլոգիաների մշակման և ներդրման, որակի նորմատիվ ցուցիչների, չափանիշների ստեղծման նկատմամբ: Այդ կապակցությամբ մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման (ՄԿՈԱԳԿ) ոլորտում, միասնական չափանիշների ներդրման նպատակով, կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև կրթության բովանդակության նվազագույնը և կրթական գործընթացի ոլրակնացման որոշակի նորմերը սահմանող փաստաթղթերի՝ նոր սերնդի չափորոշիչների, որպես մասնագետների կրթության մակարդակի և որակի ու պետության կողմից մասնագետների պատրաստման որակի գնահատման միջոցի մշակումը:

Կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման տեսության և պրակտիկայի վերլուծությամբ փաստվել են հակասություններ ու անհամապատասխանություններ արդեն իրականացված բարեփոխումների և Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների միջև, իսկ մասնագիտական կրթության ոլորտում դեռևս չեն իրականացվել որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկողության հատուկ, համակարգային մոտեցմամբ հիմնարար գիտական հետազոտություններ, մշակվել՝ դրանց արդյունավետ գործունեության տեխնոլոգիական համակարգեր, իրականացված հետազոտությունները մեծ մասամբ կրում են մասնավոր բնույթ:

Միաժամանակ, տնտեսական և կրթական միջազգային չափորոշիչների փոփոխություններին համապատասխան զգացվում է մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՍՈՒՀ) առջև ծագած՝ մրցունակ, որակյալ, շարժունակ մասնագետների պատրաստման և նրանց մասնագիտական պատրաստության որակի գնահատման հիմնախնդիրների լուծման նոր մոտեցումների կարիք: Տեսության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՄԿՈԱԳԿ և վերահսկողության ժամանակ չեն

սահմանվում միասնական, համընդհանուր ընդունված և միանշանակ հասկանալի նպատակներ, որոնց անհրաժեշտ է հասնել մասնագիտական ուսումնական գործունեության արդյունքում: Ուսուցման նպատակները ձևակերպվում են շատ ընդհանուր և հնարավորություն են ընձեռում ամենատարբեր մեկնաբանությունների՝ տարբեր գիտությունների հիմունքներից գիտելիքների անհրաժեշտ չափաքանակների, հնարների տիրապետման գործնական կարողությունների ընտրության, ուսումնառողների իմացական ակտիվության, տրամաբանական մտածողության, մասնագիտական հետաքրքրությունների ձևավորման հարցերում: Շրջանավարտների մասնագիտական պատրաստության գործող չափանիշները բավականին ընդհանուր են ու տարբեր, և որպես կանոն, դժվարություններ են առաջացնում դրանց ընտրության հարցում, իսկ բոլոր չափանիշների միաժամանակյա կիրառությունը բերում է ավելորդ լարման և աշխատանքի մեծ ծավալի: Մասնագիտական կրթության որակն ապահովելու կառավարման և վերահսկողության առկա համակարգը միանշանակ, բացարձակ և օբյեկտիվ չէ, վերահսկողության փուլերը զատված են միմյանցից և չունեն տրամաբանական ավարտ, նեղ է ոլորտի հայտնի համակարգերի հիմքում դրված մեթոդների շրջանակը: Հաստատություններում բավականին դանդաղ են ընթանում աշխատանքները տեղեկատվական-հաղորդակցական ու ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և ուսուցման միջոցների արդիականացման ուղղությամբ, մանկավարժագիտության մեջ բացակայում է մանկավարժական և մեթոդական գիտափորձը:

Կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկողության տեխնոլոգիական համակարգերի գիտական որոնումների գործնական առավել արդյունավետ ուղղությունը, մեր կարծիքով, ՄՈՒՀ-ի կառավարման, կրթության բովանդակության ու կազմակերպման կատարելագործումն է և, անտարակույս, ուսուցման նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը: Մանկավարժական գիտահետազոտման միջոցով վերոնշյալ խնդիրների լուծումը հնարավորություն կտա հնարավոր սեղմ ժամկետներում ունենալ ՄԿՈԱ ու կառավարման մանկավարժական հիմնավոր փորձաշրջան անցած մանկավարժական տեխնոլոգիաներ, գիտատեխնիկական առաջընթացին և միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական կրթական գործընթացներ:

**Հիմնախնդրի մշակվածության աստիճանը:** Ժամանակակից մանկավարժական հետազոտությունների նյութերում ձևակերպված են մասնագիտական կրթության համակարգի զարգացման գերակա ուղղությունները և հիմնախնդիրները: Առավել կարևոր ուղղություններից պետք է դառնա ՄԿՈԱԳԿ և վերահսկողության մանկավարժական համակարգերի մշակումն ու ներդրումը, ինչն առավել արդիական է կապված շրջանավարտների՝ թողարկվող մասնագետների պետական կրթական չափորոշիչների և աշխատաշուկայի պահանջներից, գիտության, մշակույթի, տեխնիկայի, տեխնոլոգիայի առաջընթացին համապատասխան կրթության մակարդակի երաշխիքների ապահովման ձգտումների հետ:

Վերջին տարիներին մի շարք երկրներում, հատկապես, Ռուսաստանի Դաշնությունում, որոշ գիտնականներ իրենց աշխատություններում մեծ ուշադրություն են դարձրել Բոլոնիայի գործընթացի և մասնագետների պատրաստման երկաստիճան համակարգի ներդրման մանկավարժական համակարգերի (Դ. Պուզանկով, Ի. Ֆեդորով, Լ. Գրեբնև, Ա. Միտյանև), մասնագիտական կրթության չափաբերման և մասնագիտական կրթության նոր սերնդի պետական կրթական չափանիշների ձևավորման (Վ. Լեբեդև, Պ. Կուբրուշկո, Վ. Բեսպալկո, Ս. Արխանգելսկի, Օ. Օլեյնիկովա), կրթական նոր տեխնոլոգիաների մշակման, ներդրման և ուսուցման արդյու-

նավետության բարձրացման (Վ. Բեսպալկո, Ե. Պոլատ, Տ. Դիմիտրենկո, Դ. Իվանով, Ի. Ռոբերտ, Պ. Ատուտով, Ա. Ախայան), մասնագետների պատրաստման գործընթացի մշտադիտարկման (Վ. Դավիդով, Ու. Ինոյատով, Լ. Կաչալովա, Յու. Ռուբին, Ա. Սախարովսկի), մասնագետների պատրաստության որակի դիագնոստիկայի (Ա. Սիդենկո, Ն. Վասիլենկո, Վ. Բայդենկո, Տ. Լապոլխովա, Գ. Շելևա), կրթության որակի (Վ. Բայդենկո, Ի. Ֆեդորով, Վ. Գուրով, Ա. Վրոնյնստիյն), կրթության կրմայետենտային մոտեցման և կոմպետենցիաների ձևավորման (Ա. Լևչենկո, Ի. Ջիմնյայա, Մ. Շալամովա, Դ. Ռևան), հավատարմագրման և կրթության որակի վերահսկողության (Ա. Լևրենտո, Վ. Դավիդով, Լ. Գրեբն, Ի. Ֆեդորով), մասնագետների պատրաստման որակի ապահովման և շուկայական հարաբերությունների պայմաններում բարձրագույն ՄԿՈԱԳԿ (Գ. Կունցև, Վ. Բայդենկո, Մ. Լիսաուսկենե), ՄԿՈԱԳԿ (Օ. Գլուդկին, Յու. Պոխոլյով, Ա. Մոզիլ, Վ. Ժուկով, Ն. Սելեզնյովա, Ա. Վրոնյնստիյն, Ա. Մոզիլ), կրթության համակարգի և մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիայի (Ա. Դուկասյան, Լ. Ասատրյան, Ա. Կարապետյան, Ֆ. Յուլայան, Ն. Շուրկովա, Յու. Կլարին) տեսական և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրմանը: Գիտական գրականության, վերոնշյալ մանկավարժ-հետազոտողների աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող հիմնախնդիրները չի կարելի համարել լուծված, հատկապես, երբ խոսքը վերաբերում է նոր տիպի մասնագիտական կրթությանը: Միաժամանակ, ԳՅ-ում հետխորհրդային շրջանի մանկավարժագիտության մեջ դեռևս ոչ մի լուրջ գիտական փորձ չի ձեռնարկվել համակողմանիորեն լուսաբանելու, բացահայտելու և ամբողջական տեսքով ներկայացնելու ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաները:

ՄԿՈԱԳԿ տեսության և պրակտիկայի առկա վիճակը, մասնագետների պատրաստման ազգային հայեցակարգերի իրականացման ընթացքում ՄՈՒԳ-երում բացահայտեցին մի շարք հիմնախնդիրներ, որոնցով էլ պայմանավորված են սույն հետազոտության ուղղությունը, նպատակը և խնդիրները:

**Ջեռագոտության նպատակը:** Մշակել ՄԿՈԱԳԿ տեսականորեն հիմնավորված և կառավարման գործընթացում իր արդյունավետությունն ու կիրառման նպատակահարմարությունը դրսևորած մանկավարժական տեխնոլոգիաների համալիր:

**Ջեռագոտության օբյեկտը** նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական ՄԿՈԱ համակարգն է:

**Ջեռագոտության առարկան** ՄՈՒԳ-երում ուսուցման տեխնոլոգիական գործընթացն է՝ ՄԿՈԱԳԿ ու վերահսկողության մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ:

**Ջեռագոտության գիտական վարկածը:** Ենթադրվում է, որ մասնագիտական կրթության որակի հասարակությանը չգոհացնող մակարդակը պայմանավորված է որակի ապահովման գործընթացի կառավարման տեսական և կազմակերպչական-մեթոդական ու ընդհանուր մանկավարժական որոշ տեխնոլոգիաների բացակայությամբ և եղածների տարանջատվածությամբ: Մասնագիտական կրթության որակը եապես կբարելավվի, եթե՝

1. լրացվի ՄԿՈԱԳԿ, վերահսկողության տեսական ու կազմակերպչական-մեթոդական մանկավարժական տեխնոլոգիաների պակասը և ստեղծվի դրանց համալիր,
2. ՄՈՒԳ-երում ներդրվեն հատուկ կազմակերպչական-կառավարչական, կառուցվածքային և բովանդակային պայմանների ու որակի ապահովման գործընթացի կառավարման արդյունավետ միջոցներ,
3. ուսուցման գործընթացում ներդրվեն ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ և տեղեկատվական միջոցներ,

4. որակի ապահովման գործընթացում ուսումնական լսարանային և ինքնուրույն աշխատանքը կառավարվի և վերահսկվի ուսուցման յուրաքանչյուր փուլում՝ մուտքում, ընթացքում, յուրաքանչյուր կիսամյակի և տարվա ավարտին, ելքում՝ պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին և աշխատատեղում հարմարվելու ընթացքում,
5. մասնագիտական կրթության որակի չափման համակարգը ներառի մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների և կոմպետենցիաների, անձի մասնագիտական զարգացման, դրդապատճառների մակարդակները՝ կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան,
6. մասնագիտական կրթության որակի չափման համակարգի ներդրման ժամանակ կիրառվի կրթության որակի գնահատման տարբեր սանդղակներ,
7. ղեկավարությունը, մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմը կարողանա կիրառել կառավարման և վերահսկողության հմտությունների ու տարբեր մեթոդիկաների համակարգը,
8. մշտապես իրականացվի ուսուցման որակի դիագնոստիկա և կրթության որակի մշտադիտարկում, դրանց արդյունքներով նաև՝ շտկումներ,
9. ՄԿՈԱԳԿ պետական, հասարակական և ներհաստատությունային ձևերն ու արտաքին և ներքին գնահատման գործընթացները կմիահյուսվեն, հնարավոր կլինի ՄՈՒՅ-երի գործունեության որակը գնահատել օբյեկտիվ և ձևավորել ՄՈՒՅ-երի իրական վարկանիշների սանդղակ, կլուծվի աշխատաշուկայում շրջանավարտների ինքնիրացման խնդիրները, եթե կատարելագործվեն ՄԿՈԱԳԿ պետական համակարգը, ՄՈՒՅ-երի և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման մոդելն ու հավատարմագրման բուն գործընթացի ընթացակարգերը, պայմաններ ստեղծվի հասարակական հավատարմագրող կառույցների ձևավորման համար:

**Յետագոտության խնդիրները:**

1. Ուսումնասիրել տնտեսապես զարգացած երկրների, ԱՊՅ անդամ երկրների ՄՈՒՅ-երում ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաները, տեսական և պրակտիկ փորձը, դրա հիման վրա որոշել ՅՅ կրթության համակարգի համար այդ ոլորտի գերակա խնդիրներն ու ՄԿՈԱ և վերահսկողության ոլորտներում առկա հիմնախնդիրները:
2. Ուսումնասիրել աշխատաշուկայի, անհատի, պետության, հասարակության պահանջների հաշվառմամբ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների (կրեդիտային հենքով մոդուլացված ուսումնական պլաններով) մշակման և ներդրման առաջավոր փորձը, բնութագրել և ներկայացնել մասնագիտական կրթության չափորոշիչների ձևավորման առանձնահատկությունները ՅՅ, նախագծել չափորոշիչների մշակման մանկավարժական-կազմակերպական մոդել, նախագծել բարձրագույն մանկավարժական կրթությամբ բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կոմպետենտության մոդելները, մշակել դրանց մասնագիտական գործունեության տեսակները, խնդիրները և բովանդակային պարամետրերը:
3. Վերլուծել և գիտականորեն հիմնավորել ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաների մշակման հիմնական հայեցակարգային դրույթները, մշակել ՄՈՒՅ-ի կառավարման բովանդակային հիմնախնդիրները՝ ՄԿՈԱ տեսանկյունից և փորձնական եղանակով ստեղծել ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաներ:
4. Հիմնավորել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների դերը ՄԿՈԱ հարցում, մշակել ուսուցման տեխնոլոգիական գործընթացների հերթագայության

քարտեր տարբեր մեթոդների կիրառությամբ տարբեր տիպի ուսումնական պարամունքների համար:

5. Ստեղծել «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ» ուսումնական առարկայի մոդուլային ձեռնարկ, գործնական պարամունքների համար՝ հարցերի, առաջադրանքների, խնդիրների, թեստերի ժողովածու, փորձնականորեն ստուգել ձեռնարկի և ժողովածուի կիրառման արդյունավետությունը, հիմնավորել դասընթացի ուսումնասիրության դերը ապագա դասավանդողի մոտ մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման և ՄԿՈԱ գործընթացում:
6. Որոշակիացնել ՄԿՈԱԳԿ և վերահսկողության տեղեկատվական օբյեկտիվ ցուցանիշները:
7. Կառուցել ՄՈՒՅ-ի ՄԿՈԱԳԿ և վերահսկողության համալիր:
8. Մասնագետների պատրաստման որակի բարձրացման գործընթացում գիտափորձի միջոցով ստուգել մշակված համալիրը, իսկ դիագնոստիկայի և մշտադիտարկման միջոցով՝ համալիրի արգասաբերությունը:
9. Ուսումնասիրել և բացահայտել հանրապետությունում ՄԿՈԱ և ՄՈՒՅ-երի ու դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման ոլորտում առկա բացթողումներն ու թերությունները, հիմնավորել ՄԿՈԱ և պետական հավատարմագրման առկա մոդելի կատարելագործման անհրաժեշտությունը, ներկայացնել որակի ապահովման ու հավատարմագրման օրենսդրական և հավատարմագրման մոդելի մանկավարժական ու ընթացակարգային բարեփոխումների կոնկրետ ուղիներ և առաջարկություններ:

**Յետազոտության հայեցակարգը նախատեսում է.** ՄՈՒՅ-ի գործառնությունը և

զարգացումը ամբողջության մեջ որոշվում է սոցիալ-տնտեսական ու մանկավարժական պայմանների առկայության, և անտարակույս, դրանց բարեփոխումներն անպայման պետք է ենթադրեն ՄՈՒՅ-ի և որակի ապահովման գործընթացի կառավարման համարժեք մեթոդաբանական, կառուցվածքային-կազմակերպչական և մեթոդական մոտեցումների ու տեխնոլոգիաների ընտրություն:

Այդ նպատակով հատուկ համակարգ-համալիրը կրթական գործընթաց ներդնելու ճանապարհով, տարբեր աստիճանի ՄՈՒՅ-ների մակարդակով, պետք է մշակել ՄԿՈԱԳԿ և վերահսկողության տեսական ու կազմակերպական-կազմակերպչական հիմունքներ, մանկավարժական տեխնոլոգիաներ, հիմքում դնելով հետևյալ ենթադրությունները՝

- ՄԿՈԱԳԿ ու վերահսկողությունը բարդ ու բազմագործառնական համակարգ է, պայմանավորված՝ սոցիալական և մանկավարժական կոնկրետ պայմանների ու գործոնների ազդեցությամբ,
- ՄԿՈԱԳԿ ու վերահսկողության համակարգի գործառնությունը կապված է օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոններից, դրանց ազդեցության բնույթից, իրենց՝ որակական նոր աստիճանի անցման, զարգացման չափից, որոնք կարող են փոփոխվել,
- ՄՈՒՅ-երում ՄԿՈԱԳԿ համակարգը կոնկրետ բովանդակությամբ լրացվում և գործնականորեն իրականացվում է կուտակված գիտելիքների և փորձի, սոցիալական հետազոտությունների հիման վրա, փուլային եղանակով,
- ՄԿՈԱԳԿ ընթանում է բավականին երկար ժամանակահատվածում, բարեփոխումների ռազմավարական ուղղությունների որոշման պահից մինչև ավարտվելը, և ուղեկցվում է մի շարք օրինաչափություններով, որոնց իմացությունն այդ գործընթացների կառավարումը դարձնում է դյուրին,
- ՄՈՒՅ-երի և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրումը

ՄԿՈԱԳԿ, վերահսկողության, պետական կրթական չափորոշիչներին թողարկվող մասնագետների որակի համապատասխանության ճանաչման տեխնոլոգիա է, այն հնարավորություն է ընձեռում համակցել ՄԿՈԱԳԿ պետական, հասարակական և ներհաստատությունային ձևերն ու արտաքին և ներքին գնահատման գործընթացները,

- հավատարմագրումը բարդ, երկարատև գործընթաց է, ենթադրում է կրթական գործունեության պայմանների, ուսուցման և ուսումնառության գործընթացների որակի դիագնոստիկա, երկարատև մշտադիտարկում ու գործունեության արդյունքի որակի արժևորում, գնահատում:

**Հետազոտության մեթոդաբանական հիմք են** հանդիսացել իմացության ժամանակակից տեսությունը, իմացության ամանց արժեքների մասին դրույթները, անձնակողմնորոշիչ, անձնուղղորդ և գործունային մոտեցումների հայեցակարգերը, կառավարման կոմպետենտային մոտեցման սկզբունքները, մշտադիտարկման տեխնոլոգիաները, մանկավարժական դիագնոստիկայի սկզբունքներն ու մեթոդները, գործունեության ընթացքում անձի և նրա ունակությունների ձևավորման տեսությունը, մանկավարժական գործընթացների և երևույթների ուսումնասիրման ամբողջական ու բազմակողմանի մոտեցման տեսությունը, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման և գիտատեխնիկական առաջընթացի միտումներն ու օրինաչափությունները, տեսության և պրակտիկայի կապը:

Հետազոտությունները խարսխվել են ազգային անկախության գաղափարական սկզբունքների, օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի, մասնագիտական կրթության ոլորտի միջպետական համաձայնագրերի ու պայմանագրերի վրա:

**Հետազոտության մեթոդները:** Ատենախոսության առաջադիր հիմնախնդրի լուծման նպատակով հետազոտության տարբեր փուլերում օգտագործվել են մի շարք տեսական և էմպիրիկ մեթոդների համալիրներ՝

- տեսական հետազոտության մեթոդներ՝ հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական, հոգեբանական, ուսումնամեթոդական գրականության և գիտական աղբյուրների հետազոտություն, ժամանակակից տեսությունների վերլուծություն, համադրում և ընդհանրացում,
- միևնույն երևույթին, օբյեկտին վերաբերող փաստերի դուրսհանման, հավաքագրման և դասակարգման միջոցով այդ երևույթի ու օբյեկտի բնութագրում,
- իրարամերժ, հակասական դատողությունների հավաքագրման, կուտակման, դրանք միմյանց հետ համեմատման ու դրանցից գերադասելիի առանձնացման հիմնան վրա նոր նտահանգման կամ դատողության ստեղծում,
- մանկավարժական հավաստող և ձևավորող գիտափորձի մեթոդներ,
- էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝ դիտում, անկետավորում, թեստավորում, գրույց, հարցում, հարցազրույց,
- գիտական ճանաչողության ընդհանուր մեթոդներ,
- մաթեմատիկական մեթոդներ՝ որակի և քանակի արձանագրում, կարգավորում և դասակարգում, սանդղակի կազմում, ցուցանիշների միջինացում:

Հետազոտությունների ընթացքում կիրառվել է մասնագիտությունների գործառնական վերլուծության DACUM (“Developing A Curriculum” «Ուսումնական պլանի մշակում») մեթոդը: Ըստ հետազոտությունների նպատակների վերոնշյալ մեթոդների օգնությամբ իրականացվել են տեղեկատվական մանկավարժագիտական, հայեցակարգեր և տեսություններ ստեղծող, կատարելագործող, լրամշակող ու վերամշակող, կոնկրետացնող, մանկավարժական գործընթացի որակները, արդյու-



նավետությունը և սուբյեկտների զարգացման մակարդակները ստուգող, հավաստող, կազմակերպական-մեթոդական հետազոտություններ:

**Յետազոտությունները կատարվել են երեք փուլերով.**

1. նախապատրաստական փուլ՝ տեսական-որոնողական և կազմակերպական-դիագնոստիկ, ճշգրտվել է հետազոտության սկզբնական դիրքորոշումը, մշակվել՝ հասկացական գործիքակազմը, որոշվել՝ վարկածը, նպատակը, օբյեկտը, ճշգրտվել՝ մասնագետների պատրաստման համակարգի կառավարման բաղադրիչները, ՄԿՈԱԳԿ բաղկացուցիչները, որոշակիացվել՝ դրանց պարամետրերը, ցուցանիշները, չափանիշները, տեղեկատվության հավաքագրման մեթոդները, միջոցները, կազմվել աշխատանքների կատարման պլան,
2. կատարողական փուլ՝ ձևավորող, իրականացվել է մանկավարժական փորձարարական աշխատանքներ, արդյունքների քանակական և որակական հաշվառում, կազմակերպվել՝ ստացված արդյունքների քննարկումներ, մշակվել՝ ստացված արդյունքները, բացահայտվել՝ որակի ապահովման գործընթացի կառավարման որոշ տիպիկ թերություններ և բացթողումներ,
3. ընդհանրացնող փուլ՝ ստուգողական, փորձնական-ընդհանրացնող, հետազոտությունների հիմնական դրույթների արդյունավետության որոշման նպատակով իրականացվել է ձևավորող մանկավարժական գիտափորձ, համակարգվել՝ տեղեկությունը, ընդհանրացվել՝ գործընթացի կառավարման վիճակի փոփոխության դինամիկան և միտումները, գնահատվել փորձը, շտկվել և ճշգրտվել՝ գիտափորձի արդյունքներով ստացված ձեռքբերումները:

**Յետազոտության գիտական նորույթն** այն է, որ՝

1. կրթության որակի հասկացությանը տրվել է որակապես նոր սահմանում և կառուցվել ՄԿՈԱԳԿ հայեցակարգ,
2. ներկայացվել է ՄԿՈԱԳԿ և վերահսկողության ներհաստատությունային համակարգը իրական և արդյունավետ դարձնող մանկավարժական տեսական հիմունքները,
3. մշակվել է մասնագիտական ՄԿՈԱ գործընթացի ներհաստատությունային կառավարման կազմակերպչական-մեթոդական մեխանիզմը գործունեության որակի բարձրացման տեսանկյունից,
4. մշակվել և ՄՈՒՅ-ի աշխատանքային գործընթաց է ներդրվել կազմակերպչական-կառավարչական, կառուցվածքային ու բովանդակային պայմաններ և ՄԿՈԱԳԿ չափանիշներ,
5. սահմանվել է ՄՈՒՅ-ի կրթական գործընթացի օբյեկտիվ կապերն ու հարաբերությունները (նորմատիվ, կազմավորող, պերմանենտ բնութք, նախազգուշացնող գործողությունները, գործունեության արդյունքների գնահատման բազմաչափանիշային մոտեցումը, կազմավորումների ներդաշնակությունը, առաջընթաց պլանավորումը, անընդհատությունը, օբյեկտիվությունը) արտացոլող սկզբունքները,
6. ձևակերպվել է մասնագիտական կրթության չափաբերման սկզբունքները՝ ինքնակազմակերպում, նպատակահարմարություն, օպտիմալություն, անընդհատություն և հաջորդականություն, հրապարակայնություն, թափանցիկություն, պիտանելիություն, մարդասիրացում,
7. մշակվել է ՄՈՒՅ-ի ՄԿՈԱ գործընթացի ներհաստատությունային կառավարման համակարգ՝ շրջանավարտի անձնային նշանակալի մասնագիտական որակների մոդելավորման վրա, որն ընդգրկում է մուտքային, ընթացիկ, կիսամյա-

կային, տարեկան և ամփոփիչ վերահսկողության գործընթացներն, ինչպես նաև աշխատատեղերում հարմարվողականության հսկողությունը,

8. նախագծվել է մինչմասնագիտական, հանրակրթական, ընդհանուր ուսումնական, մասնագիտական, զարգացնող որակների գնահատման մեթոդական-կազմակերպական կառույց, որոշվել ուսուցման գործընթացում դրա կիրառության պայմանները,
9. մշակվել և փորձնականորեն ստուգվել է ՄՈՒՀ-ի մի շարք պարամետրեր՝ որակի համալիր գնահատումը և մասնագիտական գործունեության կարողությունների յուրացման ու շրջանավարտների մոտ դրանց ավտոմատացման՝ հմտությունների վերաճման գործակիցը,
10. որոշվել է ՄԿՈԱ գործընթացի ներհաստատությունային վերահսկողության փուլայնությունը, գնահատման սանդղակների տարբերակայնությունը, համալիրայնությունը, մանկավարժական և գիտամանկավարժական կոլեկտիվների մասնագիտական պատրաստության գնահատման արդյունավետ գործունեությունը,
11. հայ իրականության մեջ հետխորհրդային շրջանում առաջին անգամ փորձ է արվել տալ աշխատանքային մասնագիտությունների չափորոշիչներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների (կրեդիտային հենքով մոդուլացված ուսումնական պլաններով) ձևավորման գործընթացն արդյունավետ դարձնելու մանկավարժահոգեբանական պայմանները,
12. լրացվել է ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաների համակարգը և ստեղծվել դրանց համալիր,
13. ներկայացվել է ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների արդյունավետությունը և դրանց դերը ՄԿՈԱ գործընթացում,
14. ցույց է տրվել հանրապետությունում ՄԿՈԱ և ՄՈՒՀ-երի ու դրանց մասնագիտությունների պետական հավտարմագրման մոդելի բարեփոխման և կատարելագործման անհրաժեշտությունը, մշակվել՝ որակի ապահովման ու հավատարմագրման օրենսդրական և հավատարմագրման մոդելի մանկավարժական ու ընթացակարգային բարեփոխումների կոնկրետ ուղիներ, առաջարկություններ, հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության համակարգը համաշխարհային մշակութակրթական համակարգին ինտեգրվելու գործընթացում ՄԿՈԱԳԿ անհրաժեշտությունն ու հրատապությունը:

**Աշխատանքի տեսական նշանակությունը** պայմանավորված է մանկավարժական գիտությունների զարգացումների գնահատմամբ: Հետազոտությունը հնարավորություն է տալիս ճշգրտել ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաների տեսության և պրակտիկայի որոշակի հարցեր, դրանց նկատմամբ ցուցաբերելով բացառապես նոր մոտեցումներ: Աշխատանքը տեսականորեն հիմնավորում է քաղաքացիական հասարակություն ու իրավական պետություն կառուցող երկրում գիտատեխնիկական առաջընթացին ու միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ոլորտում որակի ապահովման անհրաժեշտությունը և որակի ապահովման գործընթացում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կարևորությունը:

Ձևակերպվել և լուծվել է հաստատություններում ՄԿՈԱԳԿ և վերահսկողության սոցիալ-հոգեբանամանկավարժական հիմնախնդիրը, բացահայտվել՝ կրթության որակի բարձրացման բնագավառում ՄՈՒՀ-ի ղեկավարության, դասավանդող կազմի գործունեության էությունն ու ուղղվածությունը, հայտնաբերվել՝ ՄԿՈԱԳԿ յուրահատկությունները, վերլուծական իմաստավորման բազայի վրա բացահայտվել՝

ժամանակակից կրթության ոչ բավարար որակի պատճառները, գործոնները, պայմանները, մշակվել՝ որակի ապահովման գործում կրթական գործընթացի մասնակիցների գործունեության ներդաշնակեցման անհրաժեշտ և բավարար պայմանները: Չաստատվել և վերլուծվել են ներհաստատությունային կառավարման սկզբունքները և ՍՈՒՅ-ի կրթական գործընթացն արտացոլող օբյեկտիվ կապերն ու հարաբերությունները, որոնք հանդիսանում են ՄԿՈՒԳԿ կառավարման և վերահսկողության համակարգի ելակետային պահանջները, իսկ դրանց կատարումը՝ հաստատության կոլեկտիվի գործունեության հաջողության անհրաժեշտ պայման:

Աշխատանքում հիմնավորվել է մասնագիտական կրթության նոր սերնդի կրթական չափորոշիչներում ՄԿՈՒ հիմնախնդիրների արտացոլմանը միտված մի շարք դրույթներ, ներկայացվել՝ ՍՈՒՅ-երի և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրումը ՄԿՈՒ համատեքստում, բացահայտվել՝ հանրապետությունում իրականացված հավատարմագրման գործընթացի ոչ բավարար արդյունավետության պատճառները, մշակվել՝ հավատարմագրման մոդելի կատարելագործման ուղիներ, առաջարկություններ, հավատարմագրման օպտիմալացման մանկավարժական տեխնոլոգիա:

Նորովի է սահմանվել մասնագիտական կրթության որակի հասկացությունը:

Աշխատանքը պարունակում է նաև մի շարք նոր մոտեցումներ, առաջ բերելով գիտնետագուսման նոր հիմնահարցեր և խնդիրներ, որոնք լուրջ խթան են մասնագիտական մանկավարժության զարգացման համար:

Չետագոտությունն ունի նաև **գործնական նշանակություն** ՍՈՒՅ-երի ղեկավարների, կրթության որակի պատասխանատուների համար՝ ուսումնադաստիարակչական գործընթացի, ՄԿՈՒԳԿ և վերահսկողության աշխատանքները պլանավորելիս ու իրագործելիս, ինչպես նաև հաստատությունների գործունեության ներքին և արտաքին զնահատող փորձագետների համար: Այն, վերջիններիս համար մեթոդական ուղեցույց է: Մշակված մասնագիտական ՄԿՈՒԳԿ տեխնոլոգիական համալիրի կիրառությունը թույլ է տալիս բարձրացնել մասնագետների պատրաստման արդյունավետությունը: Մշակված տեխնոլոգիական համալիրը կիրառելի է բոլոր ՍՈՒՅ-երում անկախ մասնագիտական կրթության մակարդակներից, աստիճանից, ուղղվածությունից:

Չետագոտությունների արդյունքներով հրատարակվել են «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ» և ««Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ II» հարցերի, առաջադրանքների, թեստերի և խնդիրների ժողովածու» բուհական ուսումնական մոդուլային ձեռնարկները, կազմվել առարկայական ծրագիր և դասավանդման մեթոդական ուղեցույց, որոնք իրենց կիրառությունն են գտել մի շարք բարձրագույն ՍՈՒՅ-երում, մագիստրոսի կրթական ծրագիր իրականացնող մի շարք կազմակերպություններում:

Սիաժամանակ, ատենախոսության նյութերը կարելի է լայնորեն օգտագործել բուհերում, քոլեջներում, արհեստագործական ուսումնարաններում որակավորման բարձրացման, վերապատրաստման, վերաորակավորման դասընթացներում:

Աշխատանքի հետագուսական և վերլուծական արդյունքները տրամադրվել են մի շարք ուսումնական հաստատությունների մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների (կրեդիտային հենքով մոդուլացված ուսումնական պլաններով) նախագծերի ձևավորման գործընթացում օգտագործելու նպատակով: Մեր կողմից արված մի շարք առաջարկություններ գործածվել են բուհերում ՄԿՈՒ գործընթացի նախագծման, իրականացման, կառավարման և վերահսկողության աշխատանքների քննարկման ժամանակ:

**Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը և գիտական եզրակացությունների ու երաշխավորությունների հավաստիությունը** ապահովված են աշխատանքի գիտական ապարատով ու մեթոդաբանությամբ: Հետազոտությունները խարսխված են ժամանակակից գիտական մեթոդաբանության և կառավարման տեսության վրա, և երաշխավորվում են բնագավառի մասնագիտական, մանկավարժական ու մեթոդական գրականության, մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության տեսական բազայով, առաջադրված խնդիրներին ու նպատակներին համարժեք հետազոտական մեթոդների կիրառմամբ, մանկավարժական գիտափորձի տևական բնույթով, ստացված արդյունքների վերլուծությամբ, ընդհանրացմամբ, մշակման ժամանակակից մեթոդների կիրառմամբ, ստացված տվյալների, եզրակացությունների, հանձնարարականների հիմնավորմամբ:

**Հետազոտության հիմնավորվածությունը** ապահովվել է նաև փորձարկվողների՝ ՍՈՒՀ-երի ղեկավարների, կրթության որակի պատասխանատուների, ուսումնառողների ու դասավանդողների, որակավորման բարձրացման դասընթացների ունկնդիրների, հարցվողների լայն ներկայացուցչությամբ, գիտափորձի տևական բնույթով և մեր անձնական մասնակցությամբ ու արդյունքների ներդրմամբ:

**Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հայեցակարգային դրույթները՝**

1. Մասնագիտական կրթության որակը անձի հանրակրթական, ընդհանուր մշակութային և մասնագիտական զարգացման մակարդակը ապահովող, նրա պահանջմունքները զարգացնող, ներուժն ու հասարակության պահանջները բավարարող, մասնագիտությունների պետական չափորոշիչների բովանդակային պահանջներին և դրանց համապատասխան ուսուցման և ուսումնառության որակների հանրագումարն է շրջանավարտներին ներկայացվող չափորոշիչային կոմպետենտային պահանջների ապահովմամբ:
2. ՄԿՈԱ տեխնոլոգիայի արդյունավետությունը խարսխվում է կառավարման համակողմանիությամբ, հիմնավորվածությամբ, ստույգության, միարժեքության, արդարության, օբյեկտիվության, հրապարակայնության, թափանցիկության, գործունեության, վերագնահատման հնարավորությունների ստեղծման սկզբունքների վրա:
3. Գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի պայմաններում ՄԿՈԱ անընդհատ փոփոխվող, շարունակական, ստեղծագործական գործընթաց է, գործընթացի կառավարումը՝ պետական կրթական չափորոշիչների, նորացված նորմատիվ փաստաթղթերի, աշխատաշուկայի պահանջների, մանկավարժագիտական ձեռքբերումների պայմաններում՝ դինամիկ, համալիր մանկավարժական և կառավարչական համակցված տեխնոլոգիական համակարգ:
4. ՄԿՈԱ գործընթացի կառավարման և համալիր վերահսկողության մանկավարժական տեխնոլոգիական համակարգն ապահովում է ուսումնառողների անձի մասնագիտական զարգացման մակարդակի օբյեկտիվ գնահատումը բնական մանկավարժական գործընթացի պայմաններում որակական ստուգման և քանակական հաստատման միջոցներով, հաստատությունում ուսումնառելու ողջ ընթացքում՝ ընդունելիությանից մինչև աշխատատեղերում հարմարվելը: Այդ համակարգը ուղղորդված է պատրաստվող մասնագետների ստեղծագործական, ինքնուրույն մտածողության ձևավորմանը, անձի զարգացմանը, մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացմանը: Կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման համակարգի բոլոր բաղադրիչներն իրարից անբաժանելի են, թեկուզ մեկ համակարգածին գործոնի փոփոխությունն անխուսափելիորեն բերում է ամբողջ համակարգի փոփոխության:

5. ՄԿՈԱ գործընթացի կառավարման և համալիր վերահսկողության մանկավարժական տեխնոլոգիական համակարգը կրթության որակի վրա ուսուցման տեղեկատվական-հաղորդակցական միջոցների և ժամանակակից տեխնոլոգիաների արդյունավետ ներգործության հնարավորություն է ընձեռում:
6. Կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիական համակարգի առաջարկվող մոդելն ապահովում է կրթության նպատակի իրականացման, բովանդակության մակարդակի ապահովման, տեխնոլոգիաների կիրառության և արդյունավետության, կրթական գործընթացի որակի վեց տեսակներով (մուտքային, ընթացիկ, սահմանային, ամփոփիչ, ամփոփիչ ատեստավորման և շրջանավարտի աշխատատեղում հարմարվելու) չափման գործընթացների կառավարման տեխնոլոգիաների արգասաբերությունը:
7. Կրթության որակի չափումների ենթակա համակարգը կրթական գործընթացի արդյունքի որակական և քանակական ցուցանիշների համախումբն է: Որակական չափման ենթակա են՝ անձի մոտիվացիայի մակարդակը, մասնագիտական գիտելիքները, կարողությունները, հմտությունները, կոմպետենցիաները, անձի զարգացման ընդհանուր մակարդակը: Քանակական չափման ենթակա են՝ գործունեության յուրացման ավտոմատացման փորձնական հաշվարկման գործակիցը, շրջանավարտի համալիր գնահատումը, ծրագրային նյութի յուրացման գործակիցը:
8. ՀՀ ՄՈՒՀ-երի և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման գործող մոդելը լուրջ կատարելագործման և բարեփոխման կարիք ունի: Պետական հավատարմագրման համար սահմանելով կրնկրետ նպատակներ, սկզբունքներ, ապահովելով ուսուցման և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, գիտամանկավարժական կադրերի վերարտադրության, գիտամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման պայմաններ ՄԿՈԱ գործընթացի պետական կառավարման համար կստեղծվի բարենպաստ և արդյունավետ պայմաններ:
9. ՄԿՈԱ առկա համակարգը որակի ապահովման միջազգային մակարդակներին համահունչ ներդաշնակություն ապահովելու նպատակով ենթադրվում է ոլորտում պետական, հասարակական և ներհաստատությունային ձևերի ու արտաքին և ներքին գնահատման գործընթացների համակցում:

**Հետազոտության փորձաքննությունը և ներդրումը** կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնում, օտար լեզուների, մանկավարժության և հոգեբանության, իրավագիտության ֆակուլտետներում, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկաների ամբիոնում ու օտար լեզուների ֆակուլտետում, Գորիսի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնում ու հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում, ՀՀ ԳԱԱ-ի միջազգային գիտակրթական կենտրոնում, Հայկական բաց, Մ. Խորենացու անվան, Գյումրու «Պրոգրես» համալսարանների գիտախորհուրդներում, մանկավարժության և հոգեբանության ամբիոններում, Գորիսի «Սյունիք» ինստիտուտի գիտախորհուրդում, հանրապետության նախնական և միջին ՄՈՒՀ-երի դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում, Երևանի պետական հումանիտար, Արտաշատի պետական թղեջներում, Գյումրիի N1 արհեստագործական ուսումնարանում:

**Կատարված հետազոտական աշխատանքի արդյունքներով հրատարակված է** 30 գիտական աշխատանք: Հետազոտությունների շրջանակներում զեկուցվել է Խ.

Աբովյանի անվան ՀՊՄՅ-ի 2008թ. «Կրթության բարեփոխումների հոգեբանական հիմնահարցեր», 2009թ. Երևանի պետական համալսարանի «Համալսարանական կրթությունը 21-րդ դարում», 2010թ. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՅ-ի ՅՈՒՆԵՍԿՕՅԻ ամբիոնի «Շարունակական և հետբուհական կրթության հիմնախնդիրներ», Երևանի տնտեսաիրավագիտական համալսարանի «21-րդ դարի մարտահրավերները և մարդկային զարգացման ասպեկտները» միջազգային գիտաժողովներում, Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիայի «Մասնագիտական կրթությունն ու ուսումնառությունն մեծահասակների և երիտասարդների համար» գլխավոր համաժողովում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՅ-ի «Մանկավարժական կրթության որակի հոգեբանական հիմնախնդիրները» գիտաժողովում, իսկ զեկույցները տպագրվել են ժողովածուներում:

**Աշխատանքի բովանդակությունը և կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է 339 էջում շարադրված՝ ներածությունից, վեց գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից (291 աղբյուր), 9 աղյուսակից, 12 նկարից և 111 էջում ներկայացված 47 հավելվածից (ընդամենը 450 էջ):

## ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

**Առաջին՝ «Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմունքները» գլխում** ներկայացված է ՄԿՈԱ գործընթացի տեսական և մեթոդաբանական հիմունքները և գործընթացի կառավարման, վերակսկողության տեխնոլոգիաների ու ամբողջական գնահատման բնագավառում առկա հիմնահարցերը, ՄՈՒՀ-երում ՄԿՈԱԳԿ և համալիր վերահսկողության մոդելը:

Կրթության որակի բարձրացման ուղիների գիտական որոնումների և իրականացման գործնական առավել արդյունավետ ուղղությունն ըստ կրթության մակարդակների մասնագիտությունների կրթական չափորոշիչների ստեղծումն է, ՄՈՒՀ-ի կառավարման, կրթության բովանդակության արդիականացումն ու գործընթացի կազմակերպման կատարելագործումը և, անտարակույս, ուսուցման նորագույն տեխնոլոգիաների ու մեթոդների ներդրումը: ՄԿՈԱԳԿ և վերահսկողության ոլորտում հետազոտությունների արդյունքներով արձանագրվել են հիմնախնդիրներ կապված մասնագիտական կրթության որակի ու դրա ապահովման երաշխիքների, ՄԿՈԱԳԿ նպատակների, որակի չափանիշների սահմանման ու գնահատման, որակի մշտադիտարկման համալիր համակարգի ու մանկավարժական տեխնոլոգիաների, ուսումնառողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և կոմպետենտությունների գնահատման մանկավարժական համակարգի մշակման հետ:

Գրականության մեջ կրթության որակը ներկայացվում է որպես «անձի հանրակրթական, ընդհանուր մշակութային և մասնագիտական զարգացման մակարդակ, որը պետական կրթական չափորոշիչներին համապատասխան բավարարում է նրա պահանջմունքներն ու հասարակության պահանջները» կամ այն «հավասարակշռված համապատասխանությունն է բազմատեսակ պահանջմունքներին, նպատակներին, պահանջներին, նորմերին (չափորոշիչներին), հիերարխիայով կազմակերպված սոցիալապես էական մշանակալի հատկությունների համակարգային ամբողջությունն», մեր կարծիքով՝ անձի հանրակրթական, ընդհանուր մշակութային և մասնագիտական զարգացման մակարդակը ապահովող, նրա պահանջմունքները, ներուժը և հասարակության պահանջները բավարարող, մասնագիտությունների պետական չափորոշիչների բովանդակային պահանջներին և դրանց համապատասխան ուսուցման և ուսումնառության որակների հանրագումարն է շրջանա-

վարտներին ներկայացվող չափորոշչային կոմպետենտային պահանջների ապահովմամբ:


Ուսումնասիրությունները, ՄՈՒՅ-երի ու կառույցների փորձը ցույց են տալիս, որ.

1. Կրթության համակարգի կառավարումը դեռևս ունի գերկենտրոնացված բնույթ:
2. Պատշաճ վերլուծության չի ենթարկվել կառավարչական գործունեության ազդեցությունը կրթական գործունեության մակարդակի և դրա արդյունքների վրա: Մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում փաստացի բացակայում են հաստատության ներքին կառավարման գիտականորեն հիմնավորված հայեցակարգերը, չեն մշակվել կրթության որակի ներքին փուլային վերահսկողության և գնահատման միասնական համակարգ:
3. Երջանավարտների շարժունության և աշխատաշուկայում նրանց կայունության, դասավանդողների պրոֆեսիոնալիզմի արդի պահանջները հանգեցնում են մասնագիտական կրթության մոտեցումների փոփոխման, որը նշանակում է նախ և առաջ փոփոխել դրա կառավարման համակարգը, այսինքն՝ նախագծել ՄԿՈԱ երաշխավորող կառավարման նոր մոդել:
4. Կրթության զարգացման հայեցակարգը ենթադրում է նոր սերնդի չափորոշիչների մշակում և ներդրում, որոնց ներդրման ժամանակ բնականոն կլուծվեն մի շարք խնդիրներ, այդ թվում՝ կրթության բովանդակության արդիականացման, գործընթացի արդյունավետության ու ՄԿՈԱԳԿ հիմնախնդիրներ:
6. ՄԿՈԱԳԿ ու քաղաքացիների, պետության շահերի պաշտպանությունը պահանջում են կրթական ծառայությունների չափաբերում: ՄԿՈԱԳԿ պետական համակարգը հաստատությունների աշխատանքի որակի ընդհանուր կառավարումն ապահովող նորմատիվ բազայով նախատեսված, չափորոշիչներում, կանոնակարգերում, հրահանգներում արտահայտված կառույցների ստեղծման, ռեսուրսների, միջոցառումների, գործընթացների, ընթացակարգերի, անտարա-կույս, նաև ՄՈՒՅ-երի, դրանց մասնագիտությունների ու կրթական ծրագրերի պետական հավատարմագրման ամբողջականությունն է:


ՄԿՈԱԳԿ ենթադրում է ղեկավարների կողմից այնպիսի գործողությունների իրականացում, ինչպիսին է ներգործությունը որակի ռեալ մակարդակի վրա: Կառավարումն ուղղված է կրթական գործընթացի մասնակիցների գործունեության բարձր արդյունքների ապահովմանը: Այն փոխում է ղեկավար կազմի արժեքային ուղենիշներն, ընդ որում՝ սկզբնական է համարվում մասնագետի նոր մոդելի վրա հիմնված կողմնորոշումը, որում միահյուսվում են անձնային, մասնագիտական և գործնական առանձնահատկություններն ու հատկանիշները: Կառավարման հիմքում ընկած են սխալների երևան գալու և կրկնվելու բացառումը, հաստատության գործընթացներին առավել մեծ թվով աշխատակիցների ներգրավումը, գիտամանկավարժական, մեթոդական խորհրդակցությունների և ինքնավերահսկողության դերի ուժեղացումը, դասավանդող կազմի որակական մակարդակի անընդհատ բարձրացումը, որակի վրա ազդող պատճառների և գործոնների բացահայտումն ու հետազոտումը: Ղեկավարի առաջնահերթ խնդիրները հանդիսանում են ռազմավարությունների որոշումը, կրթության որակի նախագծումը և գործընթացի մշտադիտարկումն ու համակարգի ամբողջական գործունեության ապահովումը: Կառավարման արդյունավետությունը կարելի է բարձրացնել, եթե ղեկավարը կարողանա ներագրել օբյեկտի՝ ըստ տարրերի կառուցվածքի վրա, մանրամասնորեն բացահայտել դրանց կարևոր փոխադարձ կապերը, հաշվի առնել դրանց բնութագրերի վիճակը և դիմամիական:

ՄԿՈԱԳԿ կառույցի ստեղծման հիմքում ընկած է ղեկավարների, դասավանդողների և ուսումնառողների միջև պարբերական փոխադարձ կապի ապահովման գործառնային շտկման սկզբունքը: Այդպիսի կառույցի յուրահատկությունն այն է, որ այստեղ ներկայացված է կարգավորյալ հավաքածու, տեղի և կառավարման բաղադրիչների վերջնական հաջորդականություն, որոնց միջև մշտական և ամուր կապը ապահովում է դասավանդողների և ուսումնառողների, ղեկավարների և դասավանդողների համատեղ գործունեության արդյունավետությունը: Այս համակարգի հիման վրա կառավարչական գործունեության իրականացումը ղեկավարին թույլ է տալիս ընդունել որակյալ կառավարչական որոշում:


Գրականության վերլուծության և հետազոտության արդյունքներով առաջարկվել է ՄԿՈԱԳԿ ներկայացվող մոդելը և ՄԿՈԱԳԿ տեխնոլոգիայի ալգորիթմը: **ՄԿՈԱԳԿ մոդելը**



ՄԿԾ II, ԲԿԾ IV	II կիսամյակ	Ա	-	-	-	-	-	-	-	Ա
ՄՄԿԾ II, III, IV կուրսեր	I կիսամյակ	Ս	Ս	-	-	-	-	-	Ս	-



ՄԿԾ I, ԲԿԾ III	II կիսամյակ	Ը	Ս	Ս	Ը	-	-	Ս	Ա
ՄՄԿԾ I, II, III կուրսեր	I կիսամյակ	Մ	Ը	Ը	-	-	Ը	-	-



Առաջին կուրս	II կիսամյակ	Ը	Ը	Ս	Ս	Ը	Ս	Ս
	I կիսամյակ	Մ, Ը	Ե, Ը	Ե, Ը	Ե, Ը	Ե, Ը	-	Ե

Վերահսկողության համակարգ	ՄԾ	ՁԾ	ՀՏ	ԸԿ	ՄԿ	ՍԳ	ՄԳԿ	ՄԳԿՅԻ
--------------------------	----	----	----	----	----	----	-----	-------

**Ծանոթություն**

ՄԿԾ-մագիստրոսի կրթական ծրագիր, ԲԿԾ-բակալավրի կրթական ծրագիր, ՄՄԿԾ-միջին մասնագիտական կրթական ծրագիր, Ը-ընթացիկ, Ա-ամփոփիչ, Ս-սահմանային, Մ-մուտքային, ՄԾ-մոտիվացիոն, ՁԾ-զարգացման թեստ, ՀԾ-հանրակրթական թեստ, ԸԿ-ընդհանուր ուսումնական կարողություններ, ՄԿ-միջնասնագիտական կարողություններ, ՄԳ-մասնագիտական գիտելիքներ, ՄԳԿ-մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, ՄԳԿՅԻ-մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, կոմպետենցիաներ:

**ՄԿՈԱԳԿ տեխնոլոգիայի ալգորիթմը**

1. փոփոխությունների նկատմամբ ներքին պահանջումներին ձևավորում,
2. որակի քաղաքականության մշակում,



3. հաստատության գործունեության որակի նախագծերի մշակում,
4. նախագծի իրականացում՝ մշակված սխեմայի համաձայն կրթական գործընթացում վերահսկողության համակարգի բաղադրիչների ներդրում,
5. ուսուցման որակի հսկման գործունեության արդյունքների վերլուծություն,
6. ուսումնառության որակի հսկման գործունեության արդյունքների վերլուծություն,
7. կատարված աշխատանքի վերլուծություն,
8. կրթական ծառայությունների որակի գնահատում՝ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման վերլուծություն, հաստատությունն ավարտելուց հետո աշխատաշուկայում և առաջին 6 ամսվա ընթացքում աշխատատեղերում նրանց հարմարվողականության հետևում,

9. վերադարձ 2-րդ և 3-րդ դիրքերին, կրթության նախատեսված խնդիրների, բովանդակության, մեթոդիկայի և տեխնոլոգիաների շտկման ուղիների որոնում:

Որակի նախագծման և ապահովման հիմքը կազմում է մանկավարժական վերլուծությունը: Կիրառելով օբյեկտի մանկավարժական վերլուծության գործառնային և կառուցվածքային մոտեցում, ղեկավարը ստանում է բավարար ամբողջական պատկերացում հաստատությունում խնդիրների լուծման, որոշակի կառավարչական որոշումների կատարման, մասնագետների պատրաստման պահանջների, չափորոշիչների և նորմատիվ պահանջների պահպանման մասին:

ՄԿՈԱԳԿ չափորոշիչների պահանջներին կրթության արդյունքների համապատասխանեցման նպատակով կրթական գործընթացի վրա նպատակաուղղված և համալիր ներգործություն է: Կառավարման օբյեկտներ են դարձել ՄԿՈԱ գործընթացը, մանկավարժական կազմը, հաստատությունների կառուցվածքային ստորաբաժանումներն ու կառույցները, ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաները: Որակի կառավարման մանկավարժական տեխնոլոգիական համակարգի կառուցումը թույլ է տալիս ստեղծել կառավարչական ապարատ: ՄԿՈԱ գործընթացի կառավարման արդյունավետությունը կախված է հաստատության ներքին ռեսուրսներից և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառությունից:

ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաներն ընդգրկում են նպատակադրման, հիմնարար գիտելիքների արդիականացման, ձեռք բերած կրթական արդյունքների մակարդակի գնահատման խնդիրները: Կառավարումը ենթադրում է նաև հետադարձ կապի ապահովում: Գործողությունների այդ ալգորիթմի իրականացման ընթացքում հնարավոր է դառնում որոշել նպատակներն ու խնդիրները, կատարել տեխնոլոգիայի տեսական մշակումներ: Կիրառվող ՄԿՈԱԳԿ համակարգը ճկուն, որակի դիմամիկ և ավարտվածության, համեմատականության, տեղայնացվածության սկզբունքների վրա կառուցված համալիր է:

ՄԿՈԱԳԿ համակարգն ուսուցման բոլոր փուլերում կիրառվող հսկողության տարբեր տեսակների և մեթոդների զուգակցում է: Այս համակարգի տարբերությունները նման համակարգերից կայանում է դրա բաղադրիչների միջև օրգանական կապի և դրա թելուգ մեկ բաղադրիչի հեռացման դեպքում համակարգի գոյությունը անհնար լինելու մեջ: Որպես ՄԿՈԱԳԿ համակարգի կառուցման սկզբունքներ ընդունվել են՝ նպատակաուղղվածությունը, գործունեությունը, տարբերակվածությունը և շերտավորվածությունը, օբյեկտիվությունը, սխտեմատիկությունը, միարժեքությունը: Այս սկզբունքներն ապահովում են ՄԿՈԱԳԿ համակարգի չափազանց դինամիկությունը: Կրթության առավել էական կերպերի, զարգացման միտումների տվյալների հավաքագրման սխտեմատիկ և պարբերական ընթացակարգը հնարավորություն են ստեղծում դրա կատարելագործման, լավարկման համար: ՄԿՈԱ գործընթացը անհրաժեշտ է դիտարկել որպես ուսումնառողի անձի զարգացման

մասնագիտական և հոգեֆիզիկական հատկությունների զարգացման համախումբ: ՄԿՈԱԳԿ համակարգն ընդգրկում է մուտքային, ընթացիկ, սահմանային, ամփոփիչ, ամփոփիչ ատեստավորման և աշխատատեղում շրջանավարտի հարմարվելու նկատմամբ վերահսկողություն ձևերը:

**Երկրորդ՝ «Մասնագիտական կրթության չափաբերման և արժևորման հիմնահարցեր» գլխում** ներկայացված է մասնագիտական կրթության չափաբերման արդի պահանջներն ու մանկավարժական մոտեցումները, չափորոշիչների ձևավորման պայմաններն ու գիտամանկավարժական հիմունքները, չափորոշիչների մշակման մոդելն ու չափորոշիչների որակի գնահատման մեթոդիկան, նոր կրթական տեխնոլոգիաների չափաբերման հիմնահարցերն ու կրեդիտային համակարգի ներդրման պայմաններն ու մանկավարժական պահանջները:

Կրթության չափաբերման պրակտիկայում տարբեր երկրներ սոցիալ-մշակութային և ավանդության զգալի տարբերությունների պատճառով գտնվում են տարբեր բևեռներում, որի պատճառով հետազոտության ընթացքում անհրաժեշտություն առաջացավ իրականացնելու մի շարք երկրների չափաբերման ու չափորոշիչների համար բնութագրական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն, դրա արդյունքներով՝ օրինակաբերությունների բացահայտում: Հաշվի առնելով, որ Հայաստանի կրթության համակարգն ունենալով կրթության չափաբերման խորհրդային հսկայական ավանդույթներն ու շրջանավարտ-մասնագետի մոդելի ստեղծման փորձը՝ հետազոտություններն ամբողջացվել են տիպային մասնագիտական-որակավորման մոդելների, որակավորման բնութագրերի, չափաբերման գործընթացների տիպականացման սկզբունքով: Բարձրագույն կրթության հիմնարարացման ասպարեզում սկզբունքային լուծում է շրջանավարտներին ներկայացվող պահանջների նկարագրման միջառարկայական մոդելի ստեղծումը և մասնագետին ներկայացվող ընդհանուր սահմանումը, որոնք գործնականում կապված են ուսումնական դասընթացների հետ և համդիսանում են անձի զարգացման հանրագումարային ցուցանիշներ:

Չափորոշիչների ստեղծումը էապես կարևորվում է հաստատությունների պետական հավատարմագրման գործընթացում դրանց գոյության բացառիկ անհրաժեշտությամբ, որպես շրջանավարտների կրթության մակարդակի ու որակավորման գնահատման հիմք: Չափորոշիչները կդառնան կրթության նպատակների և կրթության բոլոր փուլերի շեմային չափաբերման հիմքը: Չափորոշիչների կատարելագործումը շարունակական, ստեղծագործական գործընթաց է, և դարձել է մանկավարժական գիտահետազոտման ոլորտ: Կրթական չափորոշիչների հիմնախնդրի նկատմամբ աճող հետաքրքրությունները արտացոլված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան փաստաթղթերում: Չափաբերման գործընթացում կարևոր քայլ էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կրթության միջազգային չափաբերական դասակարգումը, որպես առանձին երկրների նկատմամբ մասնավորապես և միջազգային մասշտաբներով՝ կրթության մասին ամբողջական վիճակագրական տվյալների հավաքագրմանը, բանաբաղությանը և ձևակերպմանը նպաստող միջոց կամ գործիք:

Չափորոշիչների մշակման գործընթացը ենթադրում է գործատուների, պետության, կրթության նախորդ և հաջորդ մակարդակների ներկայացվող պահանջների ուսումնասիրում, ճյուղային նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցում, ինչպես նաև անձի՝ կրթության զարգացման պահանջումների հաշվառում: Ակներև է, որ չափորոշիչների մշակման գործընթացում, կարևորվում է նախնական գիտելիքների և այդ գիտելիքները գործնականում կիրառելու ունակությունների ստուգման միջոցով տվյալ մասնագիտու-

թյան ձեռք բերման համար անհրաժեշտ մակարդակը պարզելու, մասնագիտական կարողությունների կատարելագործման համար անհրաժեշտ գիտելիքների բնագավառների և ծավալների ճշգրտման, հետագայում աշխատանքային հմտությունների զարգացման համար անհրաժեշտ պայմանների հիմնավորված ձևակերպումները: Ինչն էլ հնարավոր կդարձնի մասնագետի մասնագիտական կերպարի բնութագրի ստեղծումը:

ՀՀ-ում չափորոշիչների մշակումը հիմնականում հանձնարարվում է կրթության համակարգի աշխատողների, չնայած չափորոշիչների մշակման գործում թույլ է կապը գործատուների և գիտության բնագավառի մասնագետների միջև:

Չափորոշիչների գնահատման և կատարելագործման նպատակով մշակվել է չափորոշիչի գնահատման մեթոդիկա:

**Կրթական գործունեության չափաբերումը ՍՈՒՀ-ի մրցունակության հիմնական պայմանն է:** Գործունեության ավանդական միջավայրից արդի միջավայր տեղափոխման ժամանակ ծագում է ծառայությունների մատուցման կարգավորվածության, համակարգվածության և ամբողջականության պահպանման հիմնահարցը: Կրթության համակարգի առջև ծառանում է չափորոշիչների միջանցիկ կապակցման բնական խնդիրը, որի լուծումը կդառնա կարևոր գործնական քայլ կրթության իրականացման և մրցունակ աշխատուժի ապահովման հարցում:

Հաստատությունների գործունեությունը կանոնակարգող դիդակտիկական տեխնոլոգիայի կիրառումը և չափորոշիչների համակարգի ստեղծումն ուղղված է գործընթացի կատարելագործմանը, կադրերի պատրաստման որակի բարձրացմանը, չափորոշիչների միասնականացմանը, տարբեր երկրների կրթության համակարգերի ինտեգրմանը: Բոլոնիայի հռչակագրի, այնուհետև դրան հաջորդող փաստաթղթերում հիմնախնդիրները շարադրված են հռչակագիրը ստորագրած երկրների իրավասությունների շրջանակներում պարտավորությունների մոտիվներով: Եվրոպական համագործակցության գործունեությունը համարդելի չափանիշներ և մեթոդաբանություն մշակելու նպատակին միտված, ՄԿՈՒ հարցում տեղի տվեց բուն նպատակի ճշգրտում: Սակայն, հաստատության ինքնավարության սկզբունքներին համապատասխան ՄԿՈՒ հիմնական պատասխանատվությունը դրվեց դրանց վրա: ՄԿՈՒ և գնահատման, կրթական ծրագրերի գնահատման հարցում Հայաստանում առկա է որոշակի փորձ, բայց կրթության ոլորտում վերջին տարիներին իրականացված բարեփոխումները, փոփոխությունները, ինովացիաները և մեծ թվով ուսանողների տեղաշարժն ու շարժունությունը պահանջում են կրթության որակի գնահատում ոչ միայն ուսումնառության ելքում, այլ նաև ընթացքում:

**Երրորդ՝ «Ուսուցման արդի տեխնոլոգիաները կրթության որակի ապահովման համատեքստում» գլխում** ներկայացված է՝ ՍՈՒՀ-երում ուսուցման գործընթացի տեխնոլոգիականությունն ու կրթական ծրագրերի իրականացման մանկավարժական համակարգը, տեխնոլոգիայի գործառնային կառուցվածքն ու հասկացական հիմքերը, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները՝ որպես ՄԿՈՒ գործընթաց, կրթական նորագույն տեխնոլոգիաների և հեռավար կրթական ծրագրերի որակի ապահովման երաշխիքների հիմնախնդիրն ու ՄԿՈՒԳԿ մանկավարժական տեխնոլոգիաները:

ՄԿՈՒ հնարավոր է միայն համապատասխան մոդելների և մեթոդիկայի կիրառման դեպքում: Այդ պատճառով էլ ծագում է ուսուցման արդյունավետ տեխնոլոգիաների գիտահետազոտման և մշակման անհրաժեշտություն: Ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման ճանապարհների որոնումը գիտության մեջ միշտ տարվել է կատարյալ, հստակ-հուսալի, ուղիղ-հավասարակշռված մեխա-

նիզմների միջոցով: Այժմ տարվում են այնպիսի մոտեցումներ, ուսուցման այնպիսի մոդելների որոնումներ, որոնք թույլ կտան դրանց հաղորդել կրթական նպատակներին հասնելը երաշխավորող արտադրական-տեխնոլոգիական բնույթ: Մանկավարժական տեխնոլոգիաների լայն կիրառությունը նշանակում է գոյություն ունեցող պրակտիկայի որոշիչ շրջադարձ գործընթացի կառուցման և իրականացման ազատականությունից դրա յուրաքանչյուր տարրի ու փուլի խիստ հիմնավորման, վերջնական արդյունքին հասնելու օբյեկտիվ նպատակադրում:

Մանկավարժական տեխնոլոգիան կրթական գործընթացի տեխնոլոգիականացումը որոշող համակարգածին հասկացություն է, և կարելի է օգտագործել որպես մյուս բոլոր տեխնոլոգիաների՝ կրթական, ուսուցման սահմանումների հումանիշ: Ուսուցման տեխնոլոգիան ունի մանկավարժական տեխնոլոգիայի գործընթացային-գործունեության իմաստ: Դա ուսուցման մոդելների մշակման և իրականացման տեխնոլոգիական գործընթաց է, որն իրենից ներկայացնում է կրթական գործընթացի փոփոխվող պայմաններում սահմանված ժամանակում կանխատեսած արդյունքների հասնելու երաշխիքների և կոնկրետ նպատակների իրականացումը ապահովող գործիքային եղանակների և միջոցների համակարգված ամբողջություն: Այն ունի նաև մանկավարժական տեխնոլոգիայի գործընթացային-նկարագրային իմաստ: Դա՝ նպատակներին և կանխատեսած արդյունքներին հասնելու ուղղությամբ մանկավարժական և ուսումնական գործունեության իրականացման նախագծի նկարագրությունն է: Կրթական տեխնոլոգիան մտածողության, գիտակցության ձևավորման, գիտելիքների յուրացման և դասավանդման ամբողջ գործընթացի որոշման ու իրականացման համակարգային, տեխնիկական և մարդկային ռեսուրսների ու դրանց փոխներգործությունների հաշվառմամբ մեթոդ է: Ուսուցման տեխնոլոգիան մանկավարժական համակարգի բաղադրիչ է, և կրթական տեխնոլոգիայի տարր, նրա գործընթացային մասը: Տեխնոլոգիան նախագծվում է մանկավարժական կոնկրետ մտահղացմամբ, ելնելով առկա պայմաններից և կողմնորոշվելով տրված և ոչ թե ենթադրյալ արդյունքների վրա, այն տարբերվում է արդյունքների իր վերարտադրողականությամբ: Տեխնոլոգիայում ոչ մի ավելորդ կամ բացակայող բան չի կարող և չպետք է լինի՝ մեթոդների, հնարների, եղանակների, ձևերի և միջոցների վերակառուցվելը, փոխարինվելը տեխնոլոգիականության բացակայության նշան է: Ի տարբերություն մեթոդիստի մանկավարժ տեխնոլոգ է, նա՝

- չի փորձարկում և գործ ունի ճիշտ նախագծված ու կանխատեսված արդյունքների հետ,
- բացառապես հենվում է լավ հայտնի, արդեն փորձարկված, հիմնավոր, որոշակի պայմաններում և սահմանված ժամանակահատվածում նվաճումների ենթադրվող արդյունքների հասնելը կասկած չհարուցող ուսուցման մոդելի վրա:

Մեր կողմից համակարգվել է տեխնոլոգիաների էական բնութագրերը, ուսուցման տեխնոլոգիայի կառուցվածքը՝ ըստ այն կազմող տարրերի և ըստ գործառնությունների: Ուսումնական նպատակն այն է, ինչին ձգտում է ուսուցումը, հետագան՝ որին ուղղված են դրա ջանքերը: Նպատակադրումը դասավանդման և ուսումնառության սկզբնական հիմնական գործոնն է, շարժիչ ուժը, դրանից է սկսվում կրթական գործընթացը: Այդ կապակցությամբ ամիրաժեշտ է տալ դիագնոստիկ ձևակերպում, սահմանել այնքան ճշգրիտ, կոնկրետ և որոշակի, որ հնարավոր լինի կառուցել տեխնոլոգիական գործընթաց, վերահսկել իրականացումը, չափել արդյունքները և եզրակացություն կազմել նպատակի իրականացված լինելու աստիճանի մասին: Կրթության նպատակները ձևակերպվում են ուսումնառողների ուսումնական գործունեությամբ արտահայտված կրթության արդյունքների միջոցով:

Համակարգի հաջորդ բաղադրիչն արդյունքն է, այն ինչին բերում է ուսուցումը, գործունեության հետևանքը, դրված նպատակների իրականացման աստիճանը: Ուսումնական գործունեությունը կրում է անձնային-սուբյեկտային, հուզահամակ բնույթ: Դա հիմնված է հեղինակային, անհատական, ստեղծագործական, հանկարծաստեղծ պայմաններում ուսուցման պրակտիկայի վրա, միջնորդավորվում է ուսումնառողի հոգեբանա-մասնագիտական հատկանիշներով և դասավանդողի բազմակողմանի, մտավոր, բանական, հոգևոր և այլ անձնային հատկանիշներով: Համակարգի վերոնշյալ մոդելի թեկուզ մեկ բաղադրիչի բացակայության դեպքում կան գործընթացը չի կայանա, կան էլ կկրի կորստաբեր բնույթ: Բոլոր դեպքերում, այդպիսի կրթական գործընթացի պլանավորված արդյունքը կարող է լինել միայն պատահական: Մեթոդները, միջոցները, ձևերը, եղանակները, հնարները ընտրվում և օգտագործվում են կրթական նպատակներին, տեղեկատվության բովանդակությանը և բարդությանը, ուսումնառողների տարիքային և ֆիզիոլոգիական առանձնահատկություններին, դասավանդողի մանկավարժական վարպետությանն ու անհատական առանձնահատկություններին, ՄՈՒՀ-երի նյութական հագեցվածությանն համապատասխան: Տեղեկատվության և կառավարման միջոցներն ու եղանակները տեխնոլոգիայում կարևոր է այնքանով, որքանով օպերատիվ տեղեկատվությունը ամիրաժեշտության դեպքում ճիշտ ժամանակին հնարավորություն է ընձեռում դեկավարման ժամանակ որոշում ընդունել և վերջնական արդյունքների հասնելու գործընթացում շտկումներ կատարել, որոշել ստացված արդյունքների՝ դրված նպատակներին համապատասխանության աստիճանը: Տեղեկատվության և կառավարման հիմնական միջոցներն ու եղանակներն են դիագնոստիկական և վերահսկողությունը: Ուսուցման գործընթացի վերջում արդյունքները պետք է գնահատվեն սկզբնական իրավիճակի համեմատությամբ:

Նախապատրաստական փուլում ստեղծվում են ուսուցման գործընթացի պատշաճ պայմաններ, լուծվում նպատակադրման, պայմանների դիագնոստիկայի, արդյունքների կանխատեսման, վերջնական արդյունքների ձևակերպման խնդիրները: Տեխնոլոգիայի կատարողական հատվածը նախագծված նպատակների իրականացման գործընթացն է: Գնահատման-վերլուծական փուլում որոշվում է գործունեության արդյունքները նպատակներին համապատասխանության աստիճանը:

Ուսուցման տեխնոլոգիայի ժամանակ իրականացվում է անձնակողմնորոշիչ և անձնուղղորդ կրթական տեխնոլոգիաներ, նկատի ունենալով, որ անձը հանդիսանում է մասնագետների պատրաստման ազգային մոդելի հիմնական բաղադրիչներից մեկը՝ համակարգի գլխավոր օբյեկտը և սուբյեկտը, կրթական ծառայություններ մատուցողն ու սպառողը: Ուսումնառողի անձնավորությունը դառնում է ամբողջ կրթության համակարգի նպատակը, դրա գերակայող սուբյեկտը: Անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաներն ըստ էության նախատեսում են կրթական գործընթացի բոլոր մասնակիցների լիարժեք զարգացում: Անձնակողմնորոշիչ տեխնոլոգիական գործընթացում դասավանդողը ձեռք է բերում այլ դեր և գործառնություն, նա առավելապես հանդես է գալիս ուսումնառողների ինքնուրույն ակտիվ ճանաչողական գործունեության կազմակերպիչ, իրազեկված խորհրդատուի և օգնականի դերում: Դասավանդողի գործողությունը ուղղորդվում է ոչ թե ուսումնառողների գիտելիքների և կարողությունների վերահսկողության, այլ նրանց գործունեության դիագնոստիկայի վրա: Որպես տեխնոլոգիայի հայտանիշների գնահատման չափանիշներ և ցուցանիշներ ընտրվում են պարամետրերը կառուցումը, ուսումնառողների գործունեության դրդապատճառային ա-

պահովումը, անձնուղղորդ մոտեցման ապահովումը և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

Համրապետության բուհերում էլեկտրոնային տեխնոլոգիաների ոլորտում, դեռևս լայնածավալ հետազոտություններ չեն իրականացվում և այդ պատճառով էլ ի սկզբանե էապես կարևորվում է՝ գիտակցումն այն բանի, որ բոլոր տեսանկյուններից առավել արդյունավետություն կարելի է ակնկալել դասական և էլեկտրոնային գործիքակազմերի համադրման միջոցով: Կարևոր է նշել, որ դասական և էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառությամբ ստացված կրթության որակի երաշխիքների պրոբլեմը կրում է համակարգածին բնույթ: Այն չի կարող արդյունավետ լուծվել առանց համապատասխան իրավական-նորմատիվ բազայի, կրթության շուկայի բոլոր մասնակիցների միջազգայնորեն համընդհանուր ընդունված մոտեցումների, հետաքրքրությունների ու շահերի: Համաշխարհային պրակտիկայում արդեն իսկ առկա է վերոնշյալ խնդիրների ազգային մասշտաբներով հաջողված լուծումների փորձ: Այսօր Հայաստանում ենթադրվում է պետական և հասարակական կառույցների ստեղծում, որոնք իրենց վրա կվերցնեն նորմատիվ-իրավական ու մեթոդաբանական բազայի մշակման խնդիրները (այդ թվում՝ նաև էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառության և դրա որակի փորձաքննության, գնահատման), դրանք իրականացնել հաստատությունների բազայի վրա: Այդ ուղղությամբ կրթության զարգացման հիմնական պայմանն էլ սկզբանե կրթական ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման բարձր որակ երաշխավորող հաստատությունների գործունեության կազմակերպումն է: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է կրթության բովանդակության, գործունեության պայմանների, տեխնոլոգիաների, գործունեության կազմակերպման, կառավարման ոլորտները ընդգրկող չափորոշիչների կուռ համակարգ: Չափորոշիչների համակարգը ուղղորդված է հեռավար ուսուցմանը և ենթադրում են ինտերնետ-տեխնոլոգիաների, կրթական լրկալ գործիքակազմի, հեռուստահաղորդակցության, լսարանում դասավանդողի հետ հաղորդակցման միջոցներով համակարգված ու հաջորդական ուսուցում:

Տարբեր տեխնոլոգիական միջավայրերում որպես չափաբերման օբյեկտներ հանդես են գալիս նաև ուսումնամեթոդական նյութերի ամբողջական ներկայացման սկզբունքները: Հեռավար տեխնոլոգիաների կիրառման ժամանակ ուսումնամեթոդական համալիրների միևնույն տարրի բովանդակությունը պետք է բաշխված լինի տարբեր միջավայրերի, որպեսզի ապահովվի ուսումնական նյութի յուրացման արդյունավետությունն ու որակը, ուսումնառողների կողմից անհրաժեշտ հմտությունների յուրացումը: Ուսումնական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի չափաբերման հարցը լուծվում է շրջանավարտներին ներկայացվող գործատուների և չափորոշիչների պահանջների միջոցով:

**Բուհերը հետազոտական ու կրթական ծառայություններ մատուցող կազմակերպություններ են** և պետք է ենթարկվեն շուկայի այնպիսի օրենքների, ինչպիսին է պատվիրատուի վրա կողմնորոշումը, ծառայությունների մատուցման որակն ու մրցունակությունը: Որակի կառավարման ներբուհական համակարգի գործընթացային-ուղղորդված մոդելի «փիլիսոփայության» ելությունը հանդիսանում է ոչ թե մարդկանց ծրագրավորումը որոշակի կանոնների պահպանման ուղղությամբ, այլ ակադեմիական ազատությունների և մանկավարժական խմբակցության պոտենցիալի հիմքը: Մասնագետի պատրաստման որակը որպես գործընթաց և արդյունք սինթեզվում է դիմորդի պոտենցիալի, դասավանդման, աշխատանքային ծրագրերի, տեխնոլոգիաների, գիտամանկավարժական կազմի, ինֆ-

րակառուցվածքի, հսկողության և վերահսկողության ընթացակարգերի և գործընթացի, ուսումնական դասընթացների դասավանդման և կրթական տեխնոլոգիաների իրականացման որակներից: Կրթության որակը որոշվում է ոչ միայն գիտելիքների քանակով և որակով, այլ նաև ուսանողի անձնային, հոգեկան, քաղաքացիական պարտքի զարգացման մակարդակով, հենց դրանում էլ կայանում է դրա գլխավոր հասարակական արժեքը:

Գլխում հանգամանորեն ներկայացված է ուսուցման տարբեր մեթոդների և դրանց համակցության կիրառությամբ ուսումնական տարբեր տիպի պարապմունքների տեխնոլոգիական հերթագայություններ, որոնց արդյունավետության ստուգման արդյունքները ներկայացված են գիտափորձի արդյունքների վերլուծության մեջ:

**Չորրորդ՝ «ՄԿՈՒ պայմանները և գործընթացի կառավարման մանկավարժական մոտեցումները»** գլխում ներկայացվում է ՄԿՈՒ հիմնախնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում, կոմպետենցիաների ձևավորումը՝ որպես կառավարման խնդիր, դրանց ձևավորման տեխնոլոգիան, ուսումնառողների մասնագիտական պատրաստության զնահատման դիդակտիկ հիմունքները, մանկավարժական տեխնոլոգիական գործընթացի հոգեբանական հիմունքներն ու մասնագետի կայացման գործընթացի հոգեբանական ուղեկցության մշտադիտարկումը:

**Բարձրագույն մասնագիտական կրթության որակը բնութագրվում է մի շարք ցուցանիշներով:** Բուհերում իրավիճակն արմատապես փոխվել է: Կրկին բարձրացել է մի շարք մասնագիտությունների վարկանիշը, անընդհատ աճում է դիմորդների մրցույթը, մրցույթին ներկայացվող պահանջները, ուսանողների թիվը: Անխուսափելի է դառնում բուհերին ռեսուրսներով ապահովման խնդրի սրացումը: Հատկապես, դա վերաբերում է կադրային խնդրին: Բուհերում կրթության որակի բարձրացման հիմնահարցերը պարուրվում են նյութական, մտավոր, տեղեկատվական և ֆինանսական ռեսուրսներում: Այդ պատճառով էլ անցումը շուկայական հարաբերությունների, պահանջում է բուհի ամբողջ գործունեության կազմակերպման նորագույն լուծումներ, ռեալ քաղաքականության իրականացման հստակ մեխանիզմներ, ֆինանսավորման նոր աղբյուրների որոնում, բուհերի կրթական ու գիտական ծառայությունների և աշխատաշուկայի միջև հավասարակշիռ փոխազդեցության համապատասխանեցում տնտեսության պահանջարկին:

Բուհերի համար կազմակերպական տեսակետից զարգացման ընդհանուր ուղղությունը՝ անցումն է բազմաստիճան, ճկուն և դինամիկ, բաց մոդելի: Կրթության արդիականացման կարևոր ուղղություններից մեկը հանդիսանում է խոշոր համալսարանական համալիրների ձևավորումը: Չի բացառվում մի քանի համալսարանների կամ համալսարանի և այլ ՄՈՒՀ-երի ինտեգրումը, ինչպես նաև պետական ու մասնավոր հաստատությունների համագործակցային կառույցների ստեղծման ճանապարհով:

Համալսարանական համալիրների նոր մոդելը որպես հիմնական համակարգածին որակ ենթադրում է կազմակերպական կառուցվածքի թափանցիկություն և բազմաստիճանություն: Վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել բուհերում չորս մոդել, որոնցից յուրաքանչյուրը կոնկրետ պայմաններում ունի իր ակնհայտ առավելություններն ու թերությունները՝ համալսարաններ՝ գիտահետազոտական ուղղվածությամբ, ուսումնա-գիտահետազոտական բուհեր, բուհեր, որոնք կողմնորոշվում են սպառողների կազմավորված գերակա շահերի վրա և հիմնականում մատուցում են կրթական ծառայություններ, հեռավար

կրթական տեխնոլոգիաներով աշխատող բուհեր: Այս կամ այն մոդելի ձևավորումը որոշվում է ազգային, պատմական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, քաղաքական կարգի մի շարք տարբեր գործոններով: Մեր կարծիքով, բուհերի դինամիկ զարգացման համար անհրաժեշտ է ոչ միայն կողմնորոշվել վերոնշյալ մոդելներից որևէ մեկով, այլ նաև ձևավորել ընթացող փոփոխություններին ճկուն արձագանքող դրանց յուրահատուկ համակցումներ:

**Կրթական համակարգերի կառավարումն էապես կապված է դրանց հետազոտման և նկարագրման համարժեք մեթոդների ընտրության հետ:** Քննարկվող մասով հետազոտման օբյեկտը մասնագիտական կոմպետենտության բարձրացման գործընթացի կառավարումն է, ուստի, բացի մանկավարժական կոմպետենտություններից պետք է որոշվեն նաև կառավարչական կոմպետենցիաները: Կոմպետենցիաները դառնում են հաստատությունների ուշադրության էպիկենտրոնը, անկախ ուղղվածությունից և կրթության ձևից: Հենց կոմպետենցիաներն ու դրանց ձևավորումն էլ հանդիսանում են կրթության «որակի նշանը», հաստատության դասը և կարգավիճակը, դրա իրական վարկանիշի ձևավորման հիմքը: Լարված մրցակցության պայմաններում բոլոր հաստատությունները «մարտնչում են» իրենց ուսանողության համար: Ուրվագիծը հստակ է. ուսանողը պետք է ընտրի կոնկրետ բուհ, ստանա ավարտական փաստաթուղթ, տեղավորվի աշխատանքի, իսկ գործատունը՝ ճանաչի տվյալ բուհի տված փաստաթուղթը: Եվրոպական երկրներում, կապված Բոլոնիայի համաձայնագրի հետ, կատարվում է անցում կրթության առավել ընդհանուր մոդելի: Բարձրագույն կրթության բնագավառում երկաստիճան համակարգի ներդրումը հնարավորություն կտա հասնել համապարփակ բաղադրիչների՝ բարձրագույն կրթության և մասնագիտական տարրի առավել ճիշտ և հուսալի համակցման:

Կրթության որակի երաշխիքների բնագավառում չափորոշիչների և ընթացակարգերի մշակումը դժվարանում է երկու կարևոր հասկացությունների՝ որակի երաշխիք և չափորոշիչ, տարբեր ձևով մեկնաբանվելու պատճառով: «Որակի երաշխիք» հասկացությունը մասնագիտական մանկավարժության մեջ ունի բազմաթիվ մեկնություններ և պահանջում է ենթատեքստային ճշգրտում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Չնայած առկա են բազմաթիվ տարբերություններ, բայց պետք է առանձնացնել մասնագիտական կրթության որակի արտաքին և ներքին գնահատման ընդհանուր սկզբունքներ, որոնք պետք է հիմք ծառայեն որակի երաշխիքների կառավարման համար և մշակել ՄԿՈՒ ներքին և արտաքին երաշխիքների չափորոշիչներ: Շուկայական տնտեսության պայմաններում բուհերի զարգացման հեռանկարները որոշվում են դրանց կողմից առաջարկվող կրթական ծրագրերի որակով, շնորհվող դիպլոմների և որակավորումների իրավասությունների շրջանակներով:

Մասնագետը ձևավորվում է ոչ թե մաս առ մաս, այլ որպես ամբողջություն, գումարային գոյացություն: Հետազոտելով մասնագետի և նրա կոմպետենցիաների ձևավորման ու զարգացման օրինաչափությունները, մանկավարժությունը կրթության յուրաքանչյուր փուլում նրան մոտենում է իբրև ամբողջություն: Կարելի է առանձնացնել և ուսումնասիրել մասնագետի առանձին հատկություններն ու մասնագիտական որակները, մասնագիտական առանձին գործառնությունների իրականացման որակն ու պրոֆեսիոնալիզմը և դրանցից գերիշխողների շուրջ մյուսներին համախմբել մեկ ամբողջականության մեջ: Ընդ որում, յուրաքանչյուր ուսումնառողի պրոֆեսիոնալիզմի ձևավորվածության աստիճանը՝ ճշգրիտ ըմբռնելու համար պետք է քննարկել դրանք իրար մեջ ներթափանցած՝ նորովի



արտահայտված բազմակողմ որակների միասնության՝ մասնագետի ամբողջական կերպի: Կոմպետենցիաները մասնագետի բնութագիրն է արտահայտված գործնական պատրաստվածության և իրավասությունների շրջանակներում իր մասնագիտությամբ պատշաճ մակարդակով գործունեության իրականացման ունակությունների միասնականությամբ: Կոմպետենցիան ճանաչողական և գործունային բաղկացուցիչների, անձնային բնութագրիչների և փորձի ինտեգրալ համակարգային միասնությունն է: Այն չի բերվում ո՛չ անձի առանձին առանձնահատկությունների, ո՛չ դրանց գումարին, ո՛չ էլ առանձին գիտելիքների, կարողությունների, հմտությունների, այն արտացոլում է ոչ միայն մարդու առկա պոտենցիալն ու դրա օգտագործման ունակությունը, այլ նաև մարդուն հնարավորություն է ընձեռում լինել պրոֆեսիոնալ: Մասնագետի կոմպետենտության կառուցվածքը, մեր կարծիքով, որոշվում է գործունեության ոլորտներով և տեսակներով: Կոմպետենցիան մասնագետի անձի հոգեվիճակների և հատկությունների բարդ համակարգ է, մասնագետների պատրաստման գործընթացում խոսել դրա «չափման» մասին, անհնար է: Այդ համակարգը ենթակա չէ անմիջական դիտման և գործունեության ընթացքում երևան է գալիս միջնորդավորված ձևով:

Դիդակտիկական գործընթացների արդյունավետ կառավարման տեսակետից կոմպետենցիաների ձևավորման տեխնոլոգիան ենթադրում է դիագնոստիկայի պարբերաբար իրականացում: Տեխնոլոգիայի յուրաքանչյուր փուլում իրականացվում է մասնագիտական կոմպետենտության մաս կազմող հմտությունների ձևավորվածության մուտքային, միջանկյալ և ամփոփիչ դիագնոստիկա: Տեխնոլոգիայի արդյունավետությունը որոշվում է դրա բաղադրիչների՝ նպատակային, դրդապատճառային, բովանդակային, գործընթացային-գործունային և արժևորման-գնահատման, փոխադարձ կապով:

Ուսումնառողների մասնագիտական պատրաստության գնահատումը ուսումնադաստիարակչական գործընթացի անհրաժեշտ հատված է, որը նույնիսկ ամենափորձառու դասավանդողի համար հանդիսանում է ամենաբարդ գործառնություններից մեկը, բացի այդ այն շատ հաճախ լինում է նաև սուբյեկտիվ:

Ուսումնառողների գիտելիքների գնահատման հարցում իրականացվել են լուրջ ուսումնասիրություններ: Առանձնացվել և գիտականորեն հիմնավորվել է գիտելիքների գնահատման գործառնությունները, անհատական, ֆրոնտալ, թեմատիկ, ամփոփիչ հարցման մեթոդիկան, ուսումնառողների վրա գնահատականի ազդեցության հոգեբանական պայմանների վերլուծության հետ կապված մոտեցումները, բացահայտվել գիտելիքների բանավոր, գրավոր, գործնական հաշվառման մեթոդիկան, դասավանդողի գնահատականի դաստիարակչական ներգործության պայմանները, մշակվել տարբեր առաջադիմությամբ ուսումնառողների մոտ ինքնագնահատման ունակությունների ձևավորման ուղիները: Ուսումնառողների ուսումնական գործունեության գնահատման գործընթացում մեծ կիրառություն կարող է ձեռք բերել թեստերի համալիրը, որն ապահովում է գնահատման միասնականությունը և հանդիսանում է չափման առավել օբյեկտիվ, չափաբերող միջոց: Թեստերի համալիրի կիրառմամբ մասնագիտական պատրաստության վերահսկողության առավել լավարկված միջոցը հանդիսանում է վարկանիշային սանդղակը:

Մասնագետների կայացման գործընթացում մասնագիտական և անձնային հետազոտների լավարկված և արգասաբեր զուգակցման հնարավորություններն կրթության բոլոր այն մակարդակների ու աստիճանների բովանդակային անցումների ու մակարդակի աճի փոխկապակցված ներդաշնակումն է, որոնցով անցնում

է ուսումնառողը: Մասնագետի կայացումը բարդ, երկարատև և անընդհատ գործընթաց է, որի գագաթնակետը տեղի է ունենում երիտասարդության շրջանում: Այն մեր կողմից, դիտվում է որպես ՄՈՒՅ-երում կրթական գործընթացի հոգեբանամանկավարժական անընդհատ ուղեկցության ազդեցությամբ և սեփական ակտիվությամբ ապագա մասնագետի անձի նպատակուղղված առաջընթաց փոփոխություններ: Մասնագետի կայացումն անպայմանորեն ենթադրում է զարգացման պահանջումը և դրա ռեալ բավարարման հնարավորություն:

**Հինգերորդ` «Մասնագետների պատրաստման որակի ապահովման գործընթացի կառավարումը» գլխում** ներկայացված է մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման և կրթության որակի վերահսկողության արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները և բուհի հավատարմագրումը ՄԿՈՍԳԿ համատեքստում:

Համաշխարհային պրակտիկայում ձևավորվել են մասնագիտական կրթության որակի գնահատման ամենատարբեր մոդելներ, մշակվել որակի չափանիշներ և չափորոշիչներ, գնահատման տեխնոլոգիաներ ու մեթոդիկաներ: Կրթության որակի գնահատման վարկանիշային համակարգում գործածվում է կրթական ծրագրերի հաստատությունների ամբողջական գնահատման փորձարարական մեխանիզմը: Կրթության որակի գնահատման ընդհանուր համակարգը խարսխվում է «որակի համընդհանուր կառավարման» սկզբունքների վրա:

ՀՀ-ում հավատարմագրման օբյեկտներն են ՄՈՒՅ-երը և դրանց մասնագիտությունները՝ ըստ որակավորման աստիճանների: Հավատարմագրումը սահմանվում է որպես պետության կողմից բուհի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչում: Հավատարմագրման տարբեր մոդելների համեմատական վերլուծության արդյունքներով հանգում ենք այն եզրակացության, որ պետական հավատարմագրման հայկական մոդելը պարունակում է անզլիական մոդելի ներքին ինքնագնահատումը, ֆրանսիական արտաքին գնահատումը, սովորողների ամփոփիչ ատեստավորումը ռուսական տարբերակով և այլն: Սակայն մոդելը լուրջ փոփոխությունների, կատարելագործման և լավարկման կարիք ունի:

Որպես կանոն, հավատարմագրման բոլոր համակարգերում հիմնական ուշադրությունը բեռնվում է ռեսուրսների, գործընթացների և արդյունքների վրա ու տարբերությունը կայանում է լոկ նրանում, թե դրանցից ո՞րն է առանձնացվում և ի՞նչ չափով: ՀՀ-ում կրթության որակի գնահատման և պետական հավատարմագրման սկզբունքների բացակայությունը հավատարմագրման գործընթացը դարձնում է ամորֆ, ինքնանպատակ՝ չնպաստելով կրթության որակի բարձրացմանը: Մեր կողմից առաջարկվող մի շարք սկզբունքների ամրագրումը, կնպաստի մեր իրականության մեջ հավատարմագրման նպատակների ճիշտ ձևակերպմանը և գործընթացին՝ երևույթի հասարակական վարկանիշի ապահովմանը:

Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գործընթացում մշանակալի տեղ է հատկացվում մասնագիտական կրթության որակի և մրցունակության բարձրացման հիմնահարցերին: Այդ հիմնահարցերը բարձրագույն կրթության արդիականացման հայեցակիմքերում, ենթադրվում է, որ պետք է դրվեն հասարակական հավատարմագրող կառույցների ստեղծման ու դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման հարցը: Եթե փորձենք որակի գնահատման և ապահովման հայաստանյան առկա համակարգին վերաբերել զարգացած երկրների մոդելներից որևէ

մեկը, ապա կտեսնենք, որ հայաստանյան պրակտիկայում միահյուսված են ՄՈՒՀ-ի գործունեության որակի արտաքին և ներքին գնահատումը:

Հավատարմագրումն իրապես հանդիսանում է ՄԿՈՒ միջոցների նորացման և վերածննդի գործընթացի մաս, կրթության կանոնակարգման, չափաբերման գործիքակազմ: Կրթության որակի գնահատման համակարգի զարգացումը ենթադրում է գործունեության պայմանների, իրականացվող գործընթացի, արդյունքների որակների ամբողջական գնահատում: Կրթական գործունեության պայմանների որակը՝ նեղ իմաստով, գործունեության լիցենզավորման պայմաններն ու պահանջներն են, որոնք երաշխավորում են միայն ՄԿՈՒ ընդհանուր պայմանները, իսկ լայն իմաստով՝ ներառում են պայմանների բարելավման հնարավորությունները, հեռանկարներն ու դրանց ապահովման մեխանիզմը: ՄԿՈՒ հայաստանյան համակարգը ՄԿՈՒ միջազգային մակարդակներին համահունչ ներդաշնակություն ապահովելու նպատակով ենթադրվում է ոլորտում պետական, հասարակական և ներհաստատությունային ձևերի ու արտաքին և ներքին գնահատման տեխնոլոգիական գործընթացների համակցում:

Մեր կողմից մշակվել է կրթության որակի գնահատման, հավատարմագրման գործընթացում որակի ցուցանիշները չափանիշներին համապատասխանության սկզբունքներ, առաջարկվել է պետական հավատարմագրման նպատակով իրականացվող ուսումնական գործունեության ինքնավերլուծության, ինքնագնահատման և փորձագիտական եզրակացություններ տալու նպատակով իրականացվող ուսումնասիրությունների և փորձաքննությունների չափանիշներ:

Գլխում հանգամանորեն ներկայացված է կրթության որակի ներքին ապահովման շրջանակներում իրականացված գիտափորձի արդյունքները:

**Վեցերորդ՝ «Մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթության որակի ապահովման գործընթացի դիագնոստիկան, մշտադիտարկումը և գնահատումը»** գլխում ներկայացված է ՄՈՒՀ-երում ՄԿՈՒ գործընթացի դիագնոստիկան, արդյունքների կանխատեսումը, կրթության որակի մշտադիտարկումը, ՄՈՒՀ-ի կրթության որակի ամբողջական գնահատումը, փորձարարական աշխատանքի վերլուծությունը:

Կրթության ոլորտում գոյություն ունի մասնագետների պատրաստման որակի նկատմամբ պահանջների աճի միտում: Կրթության ոլորտում նորագույն տեխնիկաների և տեխնոլոգիաների մշակումը և ներդրումը մասնագետից պահանջում են լրացուցիչ գիտելիքներ և կոմպետենտություններ: Գիտության, տեխնիկայի նոր ընդհանուր բնագավառների ի հայտ գալը բերում է լայն մտախորհվող, բարդ համալիր խնդիրների լուծման կարողություններով մասնագետների պատրաստման անհրաժեշտության: Կրթության ոլորտի արդի բարեփոխումների տեսանկյունից մեծ նշանակություն է տրվում հաստատության կառավարման համակարգի լավարկման անհրաժեշտությանը:

Մասնագետների պատրաստման որակի գնահատման ժամանակ առավել մեծ տարածում է գտել ուսումնական գործընթացում մասնագիտական գործունեության մոդելավորումը, որը հնարավորություն է ընձեռում պատրաստման որակի մասին դատել հենց պատրաստման գործընթացում: Այս մոտեցումը ներառում է և՛ ուսուցման, և՛ մասնագետների պատրաստման որակի գնահատման համար կիրառվող տիպային մանկավարժական խնդիրները և դրանց փոխակերպման երևան գալը ուսումնամանկավարժական խնդիրներում, պրակտիկայում: Ցանկացած կենդանի մանկավարժական գործընթացին համապատասխան ձևավորվում է մասնագետի գործունեության հիմնական տեսակները՝ հետազոտական,

պլանավորման, նախագծային, մանկավարժական տեխնոլոգիական, իրականացման, կազմակերպական: Այս հենքի վրա յուրաքանչյուր մասնագիտության զծով կառուցվում է նպատակային ծրագրային ուսումնադաստիարակչական տեխնոլոգիա և որոշվում է մասնագետի պատրաստման որակի գնահատականը:

Մասնագետի պատրաստման որակի գնահատումը անհրաժեշտ է նրա մասնագիտական գործունեության գործընթացում: Մասնագիտական գործունեության իրականացման ու դրա արդյունքների գնահատման հիմնախնդիրը դեռևս կարգավորված չէ, և շատ բանով կախված է հաստատության անմիջական ղեկավարի որակական պարամետրերից: Այժմ հաստատություններում գոյություն ունեցող դիագնոստիկ համակարգերը հնարավորություն են տալիս գնահատել մասնագետների պատրաստման պայմանների մասը միայն, բայց ոչ հենց պատրաստումը: Կոնկրետ ուսումնական դասընթացներից գիտելիքների ստուգման թեստային համակարգչային համակարգի մշակումը և ներդրումը պետք է իրականացվի մասնագետների ապագա գործունեության կառուցվածքի հաշվառմամբ: Մասնագետների պատրաստման որակի փորձագետների որոշմամբ ցուցանիշների հաշվառմամբ, կարելի է նշանակալիորեն ընդլայնել դիագնոստիկ համակարգերը և այն գնահատել առավել օբյեկտիվ:

Օբյեկտի որակի չափանիշների, նորմատիվների մշակման ժամանակ հաշվի են առնվում պետության, հասարակության, ուսումնառողների պահանջներն ու պահանջումները, ինչպես նաև ոլորտում կրթության որակի միջազգային չափանիշները: Չնայած առկա է մասնագիտական կրթության որակի նկատմամբ որոշ արտաքին տարբերություններ ու մոտեցումների բազմազանություն, դրանք բոլորը փոխկապակցված են և ունեն ընդհանուր հիմք: Կրթության որակի մասին դատողությունների հիմքում ընկած են որակի նորմատիվային չափանիշները: Այդպիսի չափանիշները մտցված են նորմատիվ-իրավական փաստաթղթերի մեջ: Որակի վերահսկողության համակարգի միջոցով մասնագիտական կրթության որակի անհրաժեշտ մակարդակի ապահովման, անձի ձևավորման և զարգացման, մասնագիտական առաջընթացի նախագծման հետ կապված, խիստ կարևորվում է ըստ կրթության մակարդակի և մասնագիտությունների շրջանավարտների մոդելների՝ որպես մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների, դասավանդողների և ծնողների, հաստատության գործունեության վերջնական արդյունքի անմիջական սպառողների համագործակցության օբյեկտի մշակումը:

Մշտադիտարկում հասկացությունը մանկավարժության մեջ ունի սահմանման բազմաթիվ տարբերակներ, բայց դրանցից յուրաքանչյուրը արտացոլում է մշտադիտարկման բազմապլան և զումարային երևույթի մեկ կողմը միայն: Ամբողջությամբ վերցրած այն կրթական ծառայությունների որակի դինամիկային և մանկավարժական համակարգերի վիճակին հետևելու բարդ կառուցվածք է: Մեր կարծիքով, մանկավարժական մշտադիտարկումը կառավարման ինքնուրույն գործառնություն է, որն ապահովում է հետադարձ կապ և կրթական հաստատության ղեկավարներին ու դասավանդողներին տեղեկացնում տրված չափանիշներին համակարգի գործունեության փաստացի արդյունքների համապատասխանության մասին: Մշտադիտարկման կարևոր բաղադրիչ է կրթության որակի սևեռակումը: Այն կարելի է ներկայացնել որպես դրված նպատակների, ստացված արդյունքների և նպատակադրման նվաճումների չափի միջև հարաբերություններ: Բայց դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե արդյունքները տրված են բացառապես ըստ գործառնությունների, դրանք կանխատեսված են

կոնկրետ ուսումնառողի պոտենցիալ զարգացման շրջանում՝ ելնելով նրա կրթվելու առավելագույն հնարավորություններից և աստիճանից, սևեռակվում են կրթական գործընթացի կոնկրետ փուլերը, այսինքն՝ ունեն գնահատման ժամանակավոր չափանիշներ:

Կրթության որակի հետազոտման գործընթացում էական նշանակություն է ձեռք բերում մշտադիտարկման ընթացքում հետևելու ենթակա որակի ինդիկատորների սահմանումը: Նախ և առաջ դրանք արդյունքներն են, որոնք կարելի է սևեռակել ճշգրտության առավել մեծ հավանականությամբ: Դրանք արտահատվում են ուսումնառողի կրթական և անձնային զարգացման, դասավանդողի կոմպետենտությունների, ՄՈՒՀ-ի ինֆրակառուցվածքի, ՄՈՒՀ-ի հեղինակության և վարկանիշի աճի, գործող պետական կրթական չափորոշիչները ուսումնառողների, գործատուների, դասավանդողների պահանջներին համապատասխանության ցուցանիշներով: Երկրորդ՝ կրթության որակը որոշում է նաև արդյունքները, որոնք ճշգրտության ավելի փոքր աստիճանով են սևեռակում, կրթական հաստատության շրջանավարտների պահանջարկը աշխատաշուկայում և աշխատանքի տեղավորվելը, երիտասարդ մասնագետների սոցիալ-մասնագիտական հարմարվողականությունը, հասարակության մեջ քաղաքացիական գործառույթների իրականացումը: Սոցիալական, մասնավորապես մանկավարժական օբյեկտների մոդելավորման տեսության և մեթոդաբանության հիման վրա մշակվել է ալգորիթմական դասի պատկանող կրթության որակի մշտադիտարկման մոդելը: Մոդելն արտացոլում է ոչ միայն դրա ստատիկ, այլև դինամիկ բաղադրիչները, ինչպես նաև մշտադիտարկման՝ որպես կառուցվածքային ամբողջություն իրականացման դինամիկան: Մշտադիտարկման ուղիղ գործընթացն ընթանում է գլխավոր նպատակից դեպի մշտադիտարկման գործառնությունների իրականացումը, որոնք հանդես են գալիս որպես դրա ինքնուրույն (մասնավոր) խնդիրներ: Այդ խնդիրներից յուրաքանչյուրն ունի իր առարկայական բովանդակությունը, բայց դրանց գործնական իրականացումը բերում է՝ (1) Տվյալների հավաքագրում→(2) Օպերատիվ մշակում→(3) Ընդհանրացում և համակարգում→(4) Տվյալների բազայի ստեղծում→(5) Վերլուծություն և գնահատում→(6) Դինամիկայի և միտումների բացահայտում→(7) Տեղեկատվության ներկայացում ալգորիթմին:

Հակառակ գործընթացն ընթանում է օգտատերերի կողմից ստացած տեղեկատվությունից դեպի նրանց կողմից որոշումների ընդունումը, այնուհետև իրականացվում է կատարված խնդիրների, կիրառվող մեթոդների և միջոցների շտկում և (կամ) մանկավարժական համակարգերի զարգացման կանխատեսում, և (կամ) կրթական նպատակների ու դրանց իրականացման միջոցների արդյունավետ ընտրություն:

Կրթության որակը կախված է գործունեության վերջնական արդյունքներից և որոշվում է ապահովվման տեխնոլոգիայի արդյունավետությունից՝ թե ինչպես է իրականացվում կատարման և հիմնախնդիրների լուծման հիմնական գործառնությունները, մանկավարժական համակարգերի վիճակի պրոբլեմային կողմնորոշման վերլուծությունը, հիմնահարցերի լուծման հնարավորությունների որոնումը, նորարարությունների պլանավորումը, կատարման մոտիվացիան, փոփոխությունների կատարումը, մշտադիտարկումը, փոփոխությունների գործընթացի կարգավորումը և գնահատումը:

Սեփական ուսումնասիրություններն, հետազոտություններն ու գիտական գրականության վերլուծությունը թույլ են տվել առանձնացնել կրթության հիմնա-

կան արդյունքները, որոնք կարելի է մեծ ճշգրտությամբ սևեռակել, չափել և գնահատել մանկավարժական մշտադիտարկման գործընթացում: Կրթության որակի մշտադիտարկումը կարելի է ներկայացնել որպես տեխնոլոգիական գործընթաց բաղկացած՝ նախապատրաստական, կատարողական կամ իրականացման, ընդհանրացնող կամ ամփոփիչ փուլերից:

ՍՈՒՀ-ի գործունեության արդյունարարությունը ամբողջությամբ որոշվում է նրանով, թե հաստատությունը կրթության ինչպիսի՞մ որակ է երաշխավորում և ապահովում: Դա հնարավոր է միայն որոշակի կրթական համակարգի, համապատասխան մանկավարժական գործընթացների և ՄԿՈԱԳԿ ու վերահսկողության մանկավարժական տեխնոլոգիաների առկայության պայմաններում: Այս գլխում ներկայացված է նաև ՍՈՒՀ-ի կրթական գործունեության պայմանների որակի ցուցանիշները, կրթության գործընթացին և դրա իրականացման փուլերին ներկայացվող պահանջները, ՍՈՒՀ-ի կրթության որակի գնահատման ալգորիթմի տարբերակ, կրթության որակի ներքին ամբողջական գնահատման օբյեկտները:

**«Փորձարարական աշխատանքի վերլուծություն» ենթազխում ներկայացված է** մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում ՄԿՈԱՆԵՐԻՆ և արտաքին գնահատման առկա համակարգերի հետազոտությունը, մշակված ՄԿՈԱԳԿ և վերահսկողության տեսական ու կազմակերպչական-մեթոդական մանկավարժական տեխնոլոգիաների համալիրը, փորձնական ճանապարհով դրանց արդյունավետության ստուգումը: Գիտափորձերը իրականացվել է լայնությամբ՝ մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում և խորությամբ՝ ուսուցման որակի (դասի որակի) ապահովումից մինչև պետական հավատարմագրում:

Մասնագետի անձնային ու մասնագիտական հատկանիշները, մասնագետի մասնագիտական մոդելի ձևավորման մանկավարժական գործընթացը, դրա օրինակափոխություններն ու սկզբունքները, մանկավարժարհագրաբանական պայմանները ճշգրիտ բացահայտելու նպատակով իրականացվել է մանկավարժական միջին և բարձրագույն մասնագիտական կրթության մի շարք մասնագիտությունների գծով մասնագետների մասնագիտական մոդելների, թողարկվող մասնագետների կոմպետենցիաների, մասնագետների որակավորման բնութագրերի, մասնագետի անձնային և հոգեբանական հատկանիշների, մասնագետի աշխատանքային գործունեությանը ներկայացվող պահանջների հետազոտություն: Կիրառելով մասնագիտությունների գործառնական վերլուծության DACUM մեթոդը, կազմվել է մանկավարժական միջին և բարձրագույն կրթության մասնագետների DACUM հետազոտության աղյուսակ, իրականացվել ուսուցիչների գիտելիքների, կարողությունների, հմտությունների գործառնային վերլուծություն, մանկավարժական միջին մասնագիտական կրթության մասնագետի, բակալավրի և մագիստրոսի կոմպետենտային մոդելները, դրանց հիմքով՝ որոշվել է շրջանավարտների կոմպետենտությունները: Նույն մեթոդը կիրառվել է նաև արհեստագործական կրթական ծրագրերի շրջանակներում:


Հետազոտությունները կոնկրետացվեցին միջին և բարձրագույն մասնագիտական կրթության դաստիարակի և տարրական դասարանների ուսուցչի աշխատանքային մասնագիտությունների, մասնագիտական կերպարների և դրանց համապատասխան կրթական մասնագիտությունների վրա: Գիտափորձի արդյունքներով մշակվել են միջին և բարձրագույն մասնագիտական կրթության մի շարք մանկավարժական մասնագիտությունների գծով շրջանավարտների մասնագիտական գործունեության տեսակները, բովանդակային պարամետրերը, կոմպետենցիաները, կատարելագործվել է չափորոշիչների որակի գնահատման մեթոդիկան, գնահատ-

վել՝ կազմված չափորոշիչները: Մանկավարժի կերպի, նրա աշխատանքային գործունեության բովանդակային պարամետրերի ուսումնասիրման, զբաղվածությունների չափորոշիչների մշակման և դրանք մասնագիտությունների կրթական չափորոշիչների կազմման ընթացքում օգտագործման նպատակով ՄՈՒՅ-ի դասախոսների ու պրակտիկայի ղեկավարների հետ իրականացվել է մտազրոհի մանկավարժի մասնագիտական և անձնային որակների շուրջ: Մտազրոհի արդյունքում առանձնացվել են մանկավարժի որակները: Սեփական հետազոտության արդյունքներով բարեփոխեցինք մեր կողմից ստեղծված մասնագիտական կրթության պետական չափորոշիչների ստեղծման մանկավարժական-կազմակերպական մոդելը:

Կիրառելով չափորոշիչների կազմման Աշխատանքի Միջազգային Կազմակերպության առաջարկած մոդելը, «ISO 9001 «Որակի մենեջմենթի համակարգը. պահանջներ» միջազգային չափորոշիչը», բացահայտելով զբաղվածության և մասնագիտական կրթության չափորոշիչների կապը, մասնագիտությունների չափորոշիչների վրա ազդող հիմնական գործոնները, աշխատաշուկայի և մասնագիտական կրթության ոլորտի փոխհարաբերությունները, նախագծեցինք չափորոշիչներում մասնագետներին ներկայացվող պահանջների, գործունեության ոլորտների, որակավորման բնութագրերի, գործունեության բովանդակային պարամետրերի արտահայտման ձևը, որոշեցինք միջին մասնագիտական կրթությամբ մասնագետի, բակավարի և մագիստրոսի գործունեության տեսակները և ընդհանրացված խնդիրները:

Չետազոտությունների ընթացքում իրականացվել է ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների արդյունավետության որոշման դիագնոստիկա և մշտադիտարկում: Գձգրտվել է մշտադիտարկման սահմանները, կազմվել հետազոտվող երևույթի չափանիշ-հայտանիշները և իրականացման ցուցիչները, մշակվել է ծրագիր և ժամանակացույց, ձևանմուշներ, ուսուցման որակի գնահատման և ինքնագնահատման թերթիկներ և ուսուցման տեխնոլոգիայի փորձագիտական գնահատման թերթ:


Չետազոտվել են տեխնոլոգիական գործընթացների ուսումնական արդյունքները կախված ժամանակից: Այդ նպատակով պարբերաբար իրականացվել է թեստավորում:



Ուսուցման տեխնոլոգիական գործընթացի և ավանդական ուսուցման ժամանակ յուրացված գիտելիքները հիշողության մեջ մտապահելու կախումը ժամանակից

Գիտափորձի արդյունքները հաստել են տեխնոլոգիական գործընթացի արդյունավետությունը: Ուսումնասիրվող նյութի հետագա ուսուցման համար յուրացման մակարդակը համարել է բավարար, եթե արժեքները գտնվել է (0,6; 0,8) միջակայքում:

Առարկան	Յուրացման գործակից	
	Փորձարարական խումբ	Ստուգողական խումբ
1 քեստ	0,6	0,62
2 քեստ	0,68	0,66
3 քեստ	0,76	0,69
4 քեստ	0,78	0,69
5 քեստ	0,79	0,7



Փիտափորձի միջոցով որոշվել է ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետությունը տեխնոլոգիական գործընթացում:

Ուսուցման, մեթոդը	Ուսումնական նյութի յուրացման մակարդակը	Խմբեր			
		Փխ		Սխ	
		ՀՓ	ՉՓ	ՀՓ	ՉՓ
Աշխատանք գրքի վրա	մինչև 8	-	-	-	-
	8-ից 12	4/23,53%	2/11,76%	8/44,44%	6/33,33%
	13ից 16	4/23,53%	4/23,53%	6/33,33%	8/44,44%
	17-ից 20	9/52,94%	11/64,71%	4/22,23%	4/22,23%
Աշխատանք գրքի վրա, փինբորտ, ինսերտ մեթոդների համակցություն	մինչև 8	-	-	-	-
	8-ից 12	3/17, 65%	2/11,76%	7/38,88%	6/33,33%
	13ից 16	5/29,41%	5/29,42%	7/38,88	6/33,33%
	17-ից 20	9/52,94%	10/58,82%	4/22,24	6/33,33%
Ինսերտ	մինչև 8	1/3,33%	-	3/10,71%	2/7,14%
	8-ից 12	3/10%	2/6,66%	12/42,86%	12/42,86%
	13ից 16	13/43,335%	14/46,67%	8/28,57%	9/32,14%
	17-ից 20	13/43,335%	14/46,67%	5/17,86%	5/17,86%
Փինբորտ	մինչև 8	2/6,66%	-	4/14,29%	3/10,71%
	8-ից 12	4/13,34%	3/10%	14/50%	12/42,86%
	13ից 16	14/50%	15/50%	7/25%	9/32,14%
	17-ից 20	10/30%	12/40%	3/10,71%	4/14,29%

Համարիչում նշված է ուսանողների թիվը, հայտարարում՝ % -ը ուսանողների ընդհանուր թվից:





Բացահայտվել, լրացվել և համակարգվել են ՄԿՈԱԳԿ պայմանները, հաստատության ղեկավարների գործառնությունները կրթության որակի նախագծման, արդյունքների կանխատեսման, ապահովման, մշտադիտարկման, աշխատակազմի որակական և քանակական լավարկման, կառավարման գործընթացի շտկման բնագավառներում: Մշակվել է ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիա, հաստատության կառավարման կառուցվածքի մոդել:

ՄԿՈԱ հիմնախնդիրները բացահայտելու նպատակով վերջին հինգ տարիների ընթացքում իրականացվել են, ըստ կրթության մակարդակների կրթության շուկայի և աշխատաշուկայի՝ այդ հաստատությունների մասնագիտությունների զծով թողարկած մասնագետների առաջարկի և պահանջարկի, ՄԿՈԱ հիմնախնդիրների հետազոտություններ: Հետազոտություններին մասնակից են դարձվել հաստատությունների ղեկավարներ, դասախոսներ, դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ, գործատուներ և գործատուներ: Փաստվել է, որ կոմպետենցիաների ձևավորումը և կառավարման խնդիր է, բացահայտվել՝ ուսանողների մասնագիտական պատրաստության դիդակտիկ հիմունքները, մշակվել՝ կոմպետենցիաների ձևավորման տեխնոլոգիա:

ՄԿՈԱԳԿ հիմնախնդիրները պետական հավատարմագրման համատեքստում հետազոտության նպատակով իրականացվել են զարգացած երկրների ՄԿՈԱ և



հավատարմագրման սկզբունքների, մեխանիզմների, մոդելների, զարգացման միտումների ուսումնասիրություններ, արդյունքների համեմատական վերլուծություն, դրանց արդյունքներով բացահայտվել է ՄՈՒՅ-երի հավատարմագրման գործընթացում տեղ գտած բացթողումները, թերությունները: Կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկողության մշակված մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության ստուգման նպատակով իրականացվել է կրթության պայմանների, գործընթացի և գործունեության արդյունքների մշտադիտարկում և ընտրված 23 ցուցանիշների ամբողջական գնահատում՝ 2007թ. և 2010 թ. կառավարման մանկավարժական տեխնոլոգիաների ներդրմամբ:

<p>ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն Միջին գումարային գնահատականը 2007թ. կազմել է 5,82, 2010թ.՝ 7.34:</p>	
<p>Գորիսի պետական համալսարան գումարային գնահատականը 2007թ. կազմել է 5, 2010թ.՝ 6:</p>	
<p>Երևանի պետական հումանիտար քոլեջ Միջին գումարային գնահատականը 2007թ. կազմել է 5,58, 2010թ.՝ 6,07:</p>	
<p>Գյումրիի N1 արհեստագործական ուսումնարան Միջին գումարային գնահատականը 2007թ. կազմել է 5.07, 2010թ.՝ 6.64</p>	

Գնահատման արդյունքում արձանագրվել է ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետությունը հաստատության զարգացման ենթատեքստում: Առաջարկվել են պետական հավատարմագրման կրնկրետ սկզբունքներ, թերությունների շտկման մեխանիզմներ, միջոցառումներ հավատարմագրման մոդելի լավարկման ուղղությամբ, մշակվել որակի ներքին և արտաքին գնահատման, ՄԿՈԱ գործընթացի կառավարման ներքին, պետական ու հասարակական ձևերի համադրման, գործունեության պայմանների, գործունեության գործընթացի և գործունեության արդյունքների որակի ապահովման հստակ ընթացակարգեր, չա-

փանհիշներ, ցուցիչներ, ինդիկատորներ, չափորոշիչներ և չափաբերման գործիքակազմ, հիմնավորվել է որակի հասարակական հավարարմագրող կառույցների գործունեության անհրաժեշտությունը:

Թեմայի այս հատվածի վերաբերյալ իրականացվել են ուսումնասիրություններ և հարցումներ ԱՄՆ-ում՝ 2009թ. հունվարին: Հետազոտման նյութ են հանդիսացել ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարության «Համալսարանական կառավարումը ԱՄՆ-ում» Հայաստանի համար նախագծի շրջանակներում ԱՄՆ-ի կառավարությունում, կրթության կառավարման պետական մարմիններում, հասարակական կառույցներում, ՄԿՈԱ և հավատարմագրման գործակալություններում, մասնավոր բուհերի միավորումներում, գնահատման և թեստավորման ու կրթական տեխնոլոգիաների կենտրոններում հանդիպումները, Վաշինգթոն, Թամպա, Սենթ-Պիտերսբուրգ, Պորտլանդ, Ցինցինատի քաղաքների ավագ դպրոցներում, քոլեջներում, համալսարաններում կառավարիչների և դասախոսական կազմի ու որակի կառավարման համապատասխան մասնագետների և ուսանողական շրջաններում դիտումները, հարցումները, հանդիպումները: Ծրագիրը հնարավորություն է ընձեռել հետազոտել ամերիկյան կրթության համակարգը, հաստատությունների առանձնահատկությունները, ՄԿՈԱ գործընթացի կառավարման և հավատարմագրման սկզբունքներն ու գործընթացները: ԱՄՆ-ում իրականացված հետազոտությունը, հանդիպումները, ճեպագրույցները, հետազայում նաև հեռավար հաղորդակցության միջոցներով ստացված հարցումները հնարավորություն տվեցին ներկայացնելու պետական հավատարմագրման վերաբերյալ աշխատանքում ներկայացված առաջարկությունները:

## Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՄԿՈԱԳԿ տեսության և պրակտիկայի, մասնագետների պատրաստման ազգային հայեցակարգերի իրականացման գործընթացի ուսումնասիրությունները բացահայտեցին մի շարք հիմնախնդիրներ, որոնցով պայմանավորված գիտական վարկածը հաստատվել է հետազոտության ընթացքում: Որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիական համակարգերի գիտական որոնումների առավել արդյունավետ ուղղություն մշակելու ընթացքում լուծվել են դրված խնդիրները: Իրականացված ուսումնասիրությունները և հետազոտությունները մեզ թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացությունների՝

1. Տնտեսապես զարգացած և ԱՊՀ անդամ երկրներում ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաների, տեսական և պրակտիկ փորձի համեմատական վերլուծության արդյունքներով արձանագրվել է, որ ՀՀ մասնագիտական կրթության համակարգի զերակա խնդիրներն ու ՄԿՈԱ ոլորտներում առկա են մի շարք հիմնախնդիրներ կապված.
  - նորմատիվ-իրավական բազայի ձևավորման, նոր սերնդի չափորոշիչների, մասնագիտական կրթական համալիրների, մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման և ներդրման,
  - ՄԿՈԱ մեխանիզմների, որակի ապահովումը երաշխավորող կառավարման նոր մոդելի նախագծման, ՄԿՈԱԳԿ տեխնոլոգիական ապահովվածության, կառավարման օրինաչափությունների բացահայտման,
  - կրթության որակի գնահատման չափանիշների սահմանման և գնահատման, մշտադիտարկման համալիր համակարգի մշակման,

- գիտելիքների, կարողությունների, հմտությունների և կոմպետենտությունների գնահատման մանկավարժական համակարգի մշակման, շրջանավարտների առաջարկի և պահանջարկի, նրանց շարժունության ու աշխատաշուկայում կայունության հետ:
- 2. Կրթական չափորոշիչների ձևավորման մշակված կազմակերպական-մանկավարժական մոդելը, միջին մասնագիտական կրթությամբ մասնագետի, բարձրագույն մասնագիտական կրթությամբ բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կոմպետենտության մոդելները հնարավորություն են ընձեռում ՀՀ կրթության համակարգի առանձնահատկություններին համապատասխան կրեդիտային հենքով մոդուլացված ուսումնական պլաններով մասնագիտությունների չափորոշիչների մշակման ժամանակ հաշվի առնել չափորոշիչները, կրթության բոլոր շահեկիցների պահանջները և ճշգրտել շրջանավարտների մասնագիտական գործունեության տեսակները, խնդիրներն ու բովանդակային պարամետրերը:
- 3. ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաների հիմնական գործիքակազմը պետական չափորոշչային պահանջներն են, իսկ վերահսկողության ինդիկատորները՝ մասնագետների պատրաստման գործընթացի արդյունքում՝ նաև պատրաստության մակարդակի ստուգման մանկավարժական ընթացակարգերն ու մեթոդների համախառնը:
- 4. Մշակվել և գիտականորեն հիմնավորվել է ՄԿՈԱԳԿ մանկավարժական տեխնոլոգիաների ձևավորման հիմնական հայեցակարգային դրույթները:
- 5. Մասնագետների պատրաստման գործընթացի որակի ապահովման հարցում կարևոր է ներհաստատությունային կառավարման համակարգի վերակառուցումը, կադրային քաղաքականությունը, նորմատիվ-իրավական և նյութատեխնիկական բազան: Որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիաների և մեթոդական հիմքերի մշակման ելակետը որոշվում է զարգացման ամբողջականությամբ՝ կրթության որակը դիտելով որպես հաստատության գործունեության գլխավոր արդյունք: Հաստատությունները կուղղորդվեն գործառնությունների կատարման գունարային որակի և արգասաբերության, ինքնակազմակերպման բարձր մակարդակի արդյունավետության հասնելուն: Ուսումնական հաստատության ազատությունների, ինքնուրույնության, ինքնավարության ապահովման մեխանիզմները կդառնան գործունեության սկզբունքներ, հաստատության ներքին կառուցվածք:
- 6. Մասնագետների պատրաստման բարձր որակի պայման կարող է դառնալ գործառնային համահարաբերակցման սկզբունքի վրա կառուցված հաստատության կառավարման դիմամիկ կենտրոնական-սիմետրիկ կառույցը:
- 7. Կառավարումը հանդիսանում է կրթության որակի բարձրացման գլխավոր գործոն: ՄԿՈԱԳԿ ենթադրում է պատճառահետևանքային կապերի հաստատում և այն բոլոր պայմանների ու գործոնների սիստեմատիկ կարգավորում, ինչից կախված է համակարգի վիճակը՝ անցանկալի երևույթներ ու գործընթացներ:
- 8. Տեսականորեն հիմնավորվել և գործնական ճանապարհով ցույց է տրվել ՄԿՈԱԳԿ և վերահսկողության կազմակերպման պայմանների, սկզբունքների և մանկավարժական տեխնոլոգիաների ապահովման անհրաժեշտությունը: ՄՈՒԴ-ի ղեկավարները պետք է ապահովեն ՄԿՈԱ գործընթացի պարամետրերի զարգացման էվոլյուցիան, դրանց դիմամիկան, իսկ դա պահանջում է այդ ցուցանիշների մշտական հետևում և կարգավորում: ՄԿՈԱԳԿ ընթացակարգերն իրականացվում են որակի ապահովման նպատակների, խնդիրների ձևավոր-

ման, գնահատման բազայի, չափման և գնահատման մեթոդների ու միջոցների ընտրության, չափման գործողությունների որակի ապահովման, համապատասխան չափանիշների և տարբեր գնահատման սանդղակների ընտրության հիման վրա:

9. Մշակված ՄԿՈԱԳԿ և համալիր վերահսկողության համակարգը գիտափորձի ընթացքում իրականացված դիագնոստիկայի և մշտադիտարկման արդյունքներից համապատասխան ապահովում է ուսումնառողների անձի մասնագիտական զարգացման մակարդակի օբյեկտիվ գնահատումը մանկավարժական գործընթացի պայմաններում, որակական ստուգման և քանակական հաստատման միջոցներով, ուսումնառության ողջ ընթացքում: Այդ համակարգը ուղղորդված է պատրաստվող մասնագետների ստեղծագործական, ինքնուրույն մտածողության դաստիարակմանը, անձի զարգացմանը, մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացմանը: ՄԿՈԱԳԿ համակարգի բոլոր բաղադրիչներն իրարից անբաժանելի են, թեկուզ մեկ համակարգածին գործոնի փոփոխությունը անխուսափելիորեն բերում է ամբողջ համակարգի փոփոխության: ՄԿՈԱԳԿ համակարգը հնարավորություն է ընձեռում կրթության որակի վրա մանկավարժական տեխնոլոգիաների միջոցով արդյունավետ ներգործության համար, իսկ կառավարման տեխնոլոգիական գործողությունների տեխնոլոգիական հաջորդականությունը երաշխավորում են կրթական չափորոշիչներին համապատասխան կրթության որակը: ՄԿՈԱԳԿ համալիր վերահսկողության համակարգը կիրառելի է մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում:
10. Բացահայտվել է, որ ՄԿՈԱԳԿ կազմակերպչական-մանկավարժական հիմունքները ներառում են գործընթացի բուն նպատակը, բովանդակությունը, մանկավարժական տեխնոլոգիաները, վերահսկողության միջոցները, կրթության որակի կառավարման և համալիր վերահսկողության համակարգի բովանդակությունն ու մեթոդիկան: Կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիական համակարգի մշակված մոդելն ապահովում է կրթության նպատակի իրականացման, բովանդակության մակարդակի ապահովման, տեխնոլոգիաների արդյունավետության, կրթական գործընթացի որակի ապահովման, որակի չափման գործընթացների կառավարման տեխնոլոգիաների արգասաբերությունը: Չափումների ենթակա համակարգը կրթական գործընթացի արդյունավետության որակական և քանակական ցուցանիշների համախումբն է: Որակական չափման ենթակա են՝ անձի մոտիվացիայի մակարդակը, մասնագիտական գիտելիքները, կարողությունները, հմտությունները, կոմպետենցիաները, ընդհանուր ուսումնական կարողությունների մակարդակը, անձի զարգացման ընդհանուր մակարդակը: Քանակական չափման ենթակա են՝ գործունեության յուրացման ավտոմատացման փորձնական հաշվարկման գործակիցը, շրջանավարտի համալիր գնահատումը, ծրագրային նյութի յուրացման գործակիցը:
11. ՄԿՈԱԳԿ տեխնոլոգիական գործընթացը բաղկացած է չափումների համակարգի նախագծման, որակի դիագնոստիկայի տեխնոլոգիայի ընտրության, արդյունքների մշակման և վերլուծության, հետադարձ կապի միջոցով շտկման փուլերից:
12. Գիտափորձի ընթացքում փորձնականորեն ստուգվել է մեր կողմից մշակված «ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ» ձեռնարկի և դրա գործնական պարապմունքների համար՝ հարցերի, առաջադրանքների, խնդիրների, թեստերի ժողովածուի կիրառման արդյունավետությունը, հիմնավորվել դասընթացի ուսումնասիրության արդյունքում ապագա դասավանդողի մոտ ձևավորված կոմ-

պետենցիաների դերը ՄԿՈՒ գործընթացում: Հիմնավորվել է ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների դերը ՄԿՈՒ հարցում:

13. Բացահայտվել է ուսուցման մանկավարժական տեխնոլոգիայի մշակման ալգորիթմը:
14. Կատարված վերլուծությունների արդյունքներով բացահայտվել են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների էական բնութագրերը:
15. Գործնականում ստուգվել է մշակված հատուկ կազմակերպչական-կառավարչական, կառուցվածքային և բովանդակային պայմանների ու ՄԿՈՒԳԿ միջոցների արդյունավետությունը, կառավարման և վերահսկողության տեղեկատվական և օբյեկտիվ ցուցանիշները:
16. Հիմնավորվել է ՄԿՈՒ և պետական հավատարմագրման առկա մոդելի կատարելագործման անհրաժեշտությունը: Բացահայտվել է ոլորտում առկա բացթողումներն ու թերությունները: Ներկայացվել որակի ապահովման ու հավատարմագրման օրենսդրական և հավատարմագրման մոդելի մանկավարժական ու ընթացակարգային բարեփոխումների կոնկրետ ուղիներ և առաջարկություններ, սահմանվել՝ կոնկրետ նպատակներ, սկզբունքներ, չափանիշներ: Բացահայտված առկա խնդիրների լուծման արդյունավետությունն էապես կախված է գործընթացում ուսուցման և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, գիտամանկավարժական և գիտական կադրերի վերարտադրության մակարդակից, գիտամեթոդական և ուսումնամեթոդական ապահովվածությունից, գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման պայմաններից, ինչպես նաև պատրաստվող մասնագետների պահանջարկից, առաջարկից, դասավանդողների և ուսումնառողների սոցիալական երաշխիքներին առնչվող հիմնախնդիրների լուծումից, և ամենակարևորը՝ ՄԿՈՒ գործընթացի պետական կառավարման սկզբունքներից ու պայմաններից:

**Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում՝**

1. Կրթության ժամանակակից համակարգեր II, Մասնագիտական կրթության չափորոշիչներ, «Լուսաբաց», 2006, 88 էջ:
2. Մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների մշակման կազմակերպական մանկավարժական մոդելը և չափորոշիչների որակի գնահատման մեթոդիկան, «Մանկավարժություն», N 1-2, 2006, էջ 33-47:
3. Որակավորումների ազգային համակարգի ստեղծման մի քանի նկատառումներ, «Մանկավարժական միտք» N 3-4, 2006, էջ 13-22 (համահեղինակներ՝ Ղարիբյան Հ.Պ, Պետրոսյան Հ.Հ.):
4. Կրթական ծրագրերի հավատարմագրման հիմնախնդիրների մասին, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» N 1(618), հունվար-ապրիլ, 2007, էջ 112-125:
5. Կրթական ծրագրերի հավատարմագրման և կրթության որակի վերահսկողության արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրներ, Գրիգոր Տաթևացի, 2007, 48 էջ:
6. Մասնագիտական կրթության որակի կառավարման և վերահսկողության հարցեր, Գորիսի պետական համալսարան, 2007, 80 էջ:
7. Մանկավարժական տեխնոլոգիական գործընթացի հոգեբանական հիմունքները, «Հոգեբանությունը և կյանքը», N3, 2007, էջ 17-20:
8. Կրթական գործընթացի տեխնոլոգիան, Նոր սերնդի ձայն, Լոնդոն, 01/ 2008, էջ 28-29:
9. Ուսումնառողների մասնագիտական պատրաստության գնահատման դիվակտիկ հիմունքները, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» N2, 2008, էջ 17-24:



28. ехнологичность образовательного процесса в профессиональных учебных заведениях, Научные новости Грузии, Международный научный журнал, Кутаиси N3(7), 2010, с. 57-61.
29. акредитация и упражнение качеством образования, Вестник Кыргызско-Российского Славянского университета N5, том 11, 2011, с. 143-147.
30. опросы обеспечения качества профессионального образования, Вестник Кыргызско-Российского Славянского университета N5, том 11, 2011, с. 148-150.

**ПЕТРОСЯН ГАЙК АМАЯКОВИЧ**

**ТЕОРИЯ И ПРАКТИКА ПЕДАГОГИЧЕСКИХ ТЕХНОЛОГИЙ УПРАВЛЕНИЯ ПРОЦЕССОМ ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ**

Диссертация на соискание ученой степени доктора педагогических наук по специальности 13.00.01. «Теория и история педагогики».

Защита состоится 20 декабря 2011г. в 14<sup>00</sup> ч. на заседании специализированного Совета 020 ВАК по присуждению ученой степени при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меци 17.

**РЕЗЮМЕ**

**Актуальность исследования** обусловлена развитием и динамичностью процессов, протекающих в сфере образования, в общественной и политической жизни страны, также необходимостью разработки и внедрения педагогических технологий по повышению эффективности управления процессом обеспечения качества образования. В процессе перехода на качественно новый уровень образования возрастает государственный и общественный интерес в отношении качества образования. В связи с этим особую значимость приобретает разработка педагогических технологий и новейших механизмов управления, возникает необходимость документирования образовательных процессов и определения соответствующих норм и стандартов процесса обеспечения качества образования. В соответствии с изменениями международных и экономических стандартов особую актуальность приобретает необходимость создания новых подходов в решении таких вопросов, как подготовка конкурентоспособных и квалифицированных специалистов в сфере образования.

**Научная новизна исследования.** Понятие качества образования приобрело качественно новое определение и, основываясь на концепции управления процессом по обеспечению качества образования, дополнила систему педагогических технологий в процессе управления качеством. В работе представлены педагогические принципы, направленные на повышение эффективности внутренней системы управления, контроля и мониторинга качества, разработан организационно-методический механизм по повышению качества образования.

В работе определены принципы, отражающие объективные отношения и взаимосвязь участников образовательного процесса в учебных заведениях, также рассмотрены стадии внутреннего управления процессом обеспечения качества, вариации и комплексность шкалы методов оценки. Сформулированы принципы определения

профессионального образования, представлены педагогико-психологические условия для разработки образовательных стандартов (учебных планов, смодулированных на основе кредитной системы) в соответствии с требованиями рынка труда.

В работе обоснована необходимость применения современных образовательных технологий и их значение в процессе обеспечения качества образования. Разработаны и представлены конкретные процедурные реформы в законодательном поле и моделях педагогической аккредитации.

**Теоретическая значимость исследования.** Диссертационная работа обосновывает необходимость обеспечения качества в сфере образования и важность применения современных образовательных технологий в данном процессе.

В работе дано решение социальной и психолого-педагогической проблеме управления и мониторинга качества образования в учебных заведениях, выявлены сущность и поле деятельности руководства и профессорско-преподавательского состава вузов в данном направлении, определены особенности управления процессом, выявлены причины и факторы несоответствий стандартов в образовательной системе, разработаны необходимые условия для гармонизации деятельности участников образовательного процесса. Также проанализированы изначальные требования и принципы внутреннего обеспечения качества образования.

Рассмотрены некоторые положения, направленные на решение задач, касательно обеспечения качества образовательных стандартов, представлены модели аккредитирования в контексте обеспечения качества, а также предложения и педагогические технологии по усовершенствованию и оптимизации механизма аккредитации.

**Практическая значимость исследования.** Основные положения исследования могут быть использованы руководством вузов, ответственных за качество образования лиц, экспертами, оценивающими деятельность учебных заведений. По результатам исследования были опубликованы модульные учебные пособия – “Современные образовательные технологии” и “Современные образовательные технологии II. сборник вопросов, задач и тестов”, а также предметные программы и методическое пособие по преподаванию, которые были широко применены в ряде учебных заведений и организациях, осуществляющих учебные программы по подготовке магистров. Материалы диссертационной работы могут быть использованы в вузах, колледжах, училищах и на курсах по повышению квалификации и переподготовке специалистов.

Результаты исследования были представлены ряду учебных заведений для разработки учебных планов и государственных образовательных критериев (учебных планов, смодулированных на основе кредитной системы). Некоторые наши положения также были применены в различных вузах в процессе обсуждений работ по планированию, осуществлению, управлению и мониторингу процессов по обеспечению качества образования.

**Достоверность полученных результатов.** Результаты данного исследования обсуждались на научных международных и республиканских конференциях в течение 2006-2010 гг. Опубликован монография, ряд научных статей, учебных пособий и методических рекомендаций, отражающих сущность диссертационного исследования, для руководителей начальных, средних и высших профессиональных учебных заведений и других образовательных учреждений.

По теме исследования опубликовано 30 научных трудов.

**PETROSYAN HAYK HMAYAK**



## **THEORY AND PRACTICE OF MANAGEMENT PEDAGOGICAL TECHNOLOGIES IN THE PROCESS OF PROVIDING QUALITY OF PROFESSIONAL EDUCATION**

Thesis for the scientific degree of doctor of pedagogy by speciality 13.00.01 "Theory and History of Pedagogy".

The defense of the thesis will be held on December 20, 2011, at 14.00, at the session of 020 professional commission granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Address: Armenia, Yerevan 0010, str. Tigran Mets 17.

### **SUMMARY**

**Actuality of the theme** lies on the dynamic processes of the social and political life, processes existing in the sphere of education and on the serious necessity of conforming and contributing pedagogical technologies of the efficient management of the quality provision process of professional education connected with the international developments. During the process of passing to the new quality degree of professional education the political and social interests in education quality is increasing. The conformation of documents for realization of educational processes, for some quality management norms and the conformation of management of innovative mechanisms and pedagogical technologies are of great importance nowadays. Considering the reformations in the international economic and educational criteria there is an urgent necessity of solving the problems of working out new approaches for preparing competitive, qualified, mobility providing specialists. The solution of the above mentioned problems should give opportunities to implement professional educational processes appropriate to the scientific-technical progress and international criteria.

### **The scientific innovation of the research.**

Qualitatively new definition has been given to the concept of education quality and management concept has been built to provide the process of professional education quality improvement, the system of quality management of pedagogical technologies has been fulfilled and their complex has been established. Pedagogical theoretical basics have been presented for making the internal system of quality management and control efficient, an organizational-methodical mechanism of internal quality provision has also been worked out for quality improvement process.

Some principles have been defined which reflect the objective connections and relations of educational processes of professional educational institutions as well as the internal management staging of quality improvement process, the variation of assessment scales, complexity have been determined.

The measurement principles of professional education have been defined as well as psychological-pedagogical conditions for establishing the process of educational standards (credit based module curriculums) have been confirmed by meeting the requirements of work-market.

Efficiency of modern educational technologies and their role in quality improvement process have been grounded. Some concrete ways of education quality improvement and accreditation legislation as well as accreditation model of pedagogical and procedure reformations have been worked out.

**Theoretical meaning of the research** lies in the assessment developments of the pedagogical sciences. The research theoretically substantiates the necessity of quality provision in the sphere of educational services and the importance of educational modern technologies in the process of quality provision.

The social psycho-pedagogical objective of education quality management and control has been defined and solved at the educational institutions. The essence and orientation of the institutional leadership and teaching staff have been revealed in the sphere of quality provision, the peculiarities of quality management have been discovered, reasons, factors, conditions of incomplete quality of modern education have been revealed, necessary and complete conditions have been worked out for the participants from educational sphere to provide quality harmoniously. Baseline requirements and principles of internal quality provision have been established and analyzed

Some objectives on reflecting the quality provision objectives in educational standards have been defined, the accreditation has been presented in the context of quality provision, some improvement ways, suggestions and pedagogical technologies of accreditation model have been worked out.

The research also has its practical importance for the university leaders, responsible persons for the quality provision and for the experts who deal with the internal and external assessment of the educational institutions. It is a methodical guide for them. On the results of the research the following educational modular textbooks for university students have been published: “Modern Technologies of Teaching” and “Modern Technologies of Teaching II: manual of tasks , tests”, a subject program and methodical teaching guidebook have been published which are used in a number of universities, and in a number of organizations which grant Master’s degree. Materials of the dissertation may be widely used in universities, colleges, vocational schools during the quality improvement and training courses.

The research and analytical results of this work have been contributed to the process of project formation which deal with the state educational standards/ credit-based modular educational curriculum/. A number of suggestions given by us have been used during the discussions on projecting, implementing, managing and controlling the quality provision procedure.

**The veracity of the results:** The results of the given research have been discussed at the international and republican conferences in 2006-2010.

A research monograph from the dissertation, a number of scientific articles, textbooks have been published as well as textbooks and some methodical instructions have been worked out for the leaders of primary, secondary and higher professional educational establishments.

30 scientific works have been published on the theme.